24 ՅՈՒՆՈՒԱՐ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 11(4863)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

Սենատը ընդունեց ցեղասպանությունը իրականացնող օրենքը

Թուրքիայի հակազդեցությունը խոշընդոտ չեղավ

Երեկ Ֆրանսիայի Սենատի լիագումար նիստում քննարկվեց ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ժխտումը իրականացնող օրինագիծը, որը դեռեւս դեկտեմբերի 22-ին ընդունվել էր այդ երկրի խորհրդարանում: Այնուհետեւ Սենատի իրավական հարցերով հանձնաժողովը հունվարի 18-ի նիստում մերժել էր օրինագիծը: Թեեւ հանձնաժողովի եզրակացությունը պարտավորեցնող չէր, բայց եւ այնպես երեկ Սենատում նախ քվեարկության դրվեց օրինագծի քննարկումը անընդունելի համարող այդ եզրակացությունը, ապա օրինագծի տեքստում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկները, իսկ վերջում քվեարկվեց բուն օրինագիծը:

Առաջինը քննարկվեց եւ քվեարկվեց Սենատի իրավական հանձնաժողովի հունվարի 18-ի արգելանքը: 253 սենատոր մասնակցեց քվեարկությանը, որոնցից 86-ը կողմ եւ 167-ը դեմ քվեարկեց հանձնաժողովի միջնորդությանը, ինչը ճանապարհ բացեց դեպի օրինագծի վերջնական ընդունմանը: Այնուհետեւ մեկ առ մեկ քննարկվեցին եւ հաջորդաբար քվեարկվեցին Սենատի տարբեր խմբավորումների եւ անդամների առաջարկած տեքստային փոփոխությունները եւ բոլորն էլ մերժվեցին: Վերջում լրացուցիչ քննարկումներից եւ բազմաթիվ ելույթներից հետո, որոնց ընթացքում բոլորն էլ համաձայն էին Հայոց ցեղասպանության իրողություն լինելուն, քվեարկվեց ամբողջական օրինագիծը, որն ընդունվեց 127 կողմ եւ 86 դեմ ձայներով: 237 սենատորներից քվեարկությանը մասնակցեց 213 հոգի:

Ինչպես Ֆրանսիայի Ազգային ժողովի պարագայում էր, այնպես էլ Սենատում օրինագծի քննարկումից առաջ Թուրքիայի ղեկավարները դրսեւորեցին հերթական բուռն հակազդեցությունը, որը սպառնալիքի բնույթ կրելով հանդերձ, շանտաժի էր նմանվում: Սենատում օրինագծի քննարկման նախօրյակին հայտարարությամբ հանդես եկավ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն:

Թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, նա զգուշացրեց Ֆրանսիային, թե Սենատում Թուրքիայի համար բացասական որոշում ընդունելու դեպքում իրենք կդիմեն նախորդ ճշված քայլերի, ապա եւ ավելացրեց. «Եթե յուրաքանչյուր խորհրդարան ելնելով պատմության սեփական մեկնաբանությունից որոշում ընդունի եւ դա կիրառի, ապա Եվրոպայում կբացվի միջնադարյան ինկվիզիցիայի մի նոր դարաշրջան: Գիտեք, թե ինկվիզիցիան ինչեր է պատճառել մարդկանց: Դրա վերակենդանացումը Ֆրանսիայի ամոթն է»:

Դավութօղլուին հավելեց վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, նշելով. «Այս օրինագծով Ֆրանսիան ուրանում է իր իսկ սահմանած ազատությունները: Դա միաժամանակ հակասում է մտքի ազատության սկզբունքներին, մարդու իրավունքների հռչակագրին, ինչպես նաեւ Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունների ոգուն: Այսօր Փարիզում հավաքվել են տասնյակ-հազարավոր թուրքեր: Սա ցույց է տալիս, որ վաղն այդ թիվը հարյուրավոր հազարների է հասնելու»:

Վերջում Էրդողանը ընդգծեց. «Մենք էլ մեր որոշումը կընդունենք կախված Սենատի դիրքորոշումից»: «Վաթան» թերթը Թուրքիայի վարչապետի այս խոսքերին տվել է «այլեւս Ֆրանսիա չեմ մեկնի» մեկնաբանությունը, որին հաստատեց փոխվարչապետ Բյուլենթ Արընչը: Լրագրողի «Մի՞թե Ֆրանսիայում կձերբակալեն վարչապետ Էրդողանին» հարցին ի պատասխան նա ասաց. «Եթե նման բան տեղի ունենա, ապա նա ինչո՞ւ Ֆրանսիա մեկնի»:

Որքան էլ կոշտ լինի օրինագծին թուրքական հակազդեցությունը, սպառնալիքի կամ շանտաժի բնույթ կրի, նախքան դա Ազգային ժողովի, ապա Սենատի քվեարկության ներկայացնելը ֆրանսիական կողմը հավանաբար մանրամասն հաշվարկել էր հակազդեցության դրսեւորման տարբերակները՝ արդյունքներով հանդերձ: Ինչ վերաբերում է պատժամիջոցներին, ապա Թուրքիայի էկոնոմիկայի նախարարը Մեջլիսում միանշանակ հայտարարել է, որ իրենք չեն կարող տնտեսական պատժամիջոցներ կիրառել Ֆրանսիայի դեմ:

Թուրքական կողմին թերեւս մնում է ռազմական, ռազմավարական եւ քաղաքական բնագավառներում սահմանափակել Ֆրանսիայի հետ համագործակցությունը: Սակայն Եվրոմիության հետ Թուրքիայի անդամակցության բանակցությունները առնչվում են քաղաքական բնագավառին, իսկ Ֆրանսիան եվրոպական այս կառույցի երկու առաջնակարգ երկրներից մեկն է:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Ալիեւը փաստացի պատրաստ է ամեն ինչ ստորագրել, իսկ իրականացնե՞լ...

Սոչիի հանդիպման հայտարարությունը

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները պատրաստակամություն են հայտնել «նոպաստելու մտավորականության, գիտական եւ հասարակական շրջանակների ներկայացուցիչների հետագա երկխոսության հաստատմանը»: Պաշտոնական հաղորդագրության համաձայն, երեկ ՌԴ նախագահ Մեդվեդեւի հրավերով Սոչիում տեղի ունեցած նախագահական Մեդվեդեւ-Սարգսյան-Ալիեւ 11-րդ հանդիպման հայտարարությունը, նշելով վերը բերված պատրաստակամության մասին, նաեւ տեղեկացնում է, որ այդ երկխոսությունն անհրաժեշտ է ԼՂ կարգավորման համատեքստում վստահության ամրապնդման միջոցներից կողմերի հումանիտար շփումների զարգացումն ապահովելու համար:

Տես էջ 3

Ժան-Կլոդ Մինյոն. «Եվրոպան քնած գեղեցկուհի չէ...»

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նորընտիր նախագահ Ժան-Կլոդ Մինյոնը, որ Ֆրանսիայի խորհրդարանն է ներկայացնում, երեկ Ստրասբուրգում ներկայացնելով իր խոսքը նախագահ ընտրվելու կապակցությամբ, ասաց, որ Արեւմտյան Եվրոպայում խաղաղությունն ընդունում են որպես շնորհք, սակայն այդ մոտեցումը ճիշտ չէ այլ վայրերում:

«Դա ոչ այնքան ճիշտ է, երբ գնում ես Կիպրոս, ԵՄ անդամ երկիր, որտեղ ՄԱԿ-ի խաղաղապահ զորքերը իսկում են մի պաս, որ մեզ հիշեցնում է մեկ այլ, առավել սահմռկեցուցիչ հիշողություն: Դա նույնն է Վրաստանում, Մերձդնեստրում եւ Լեռնային Ղարաբաղում», իր ելույթում նշեց Մինյոնը, հիշեցնելով, որ հետո է փակել աչքերն ու ընդունել անընդունելին, «բայց դա ռիսկ է կրում, որ մի օր այն, ինչ տեղի է ունենում իրականում, դառնում է օրենք»: Ուստի, ըստ Մինյոնի, վեհաժողովի պարտավորություններից է ապահովելը, որ հարցերը մնան օրակարգում եւ կողմերն էլ երկխոսեն:

Մինյոնն իր ելույթում անդրադարձավ ԵՏ գործունեության տարբեր ոլորտների, շեշտելով, որ Եվրոպան «գետի ափին քնած գեղեցկուհի չէ», անցյալին պատկանող կառույց, ինչպես ներկայացվում է երբեմն՝ ի համեմատություն, հատկապես, Եվրոմիության: Այս կառույցները, ըստ Մինյոնի, տարբեր են եւ ունեն տարբեր դերակատարություն, եւ երկուսն էլ կարեւոր են այն երկրների համար, որոնք անդամակցում են այս կազմակերպություններին: Ամեն դեպքում, Մինյոնը կոչ արեց բարեփոխել Եվրոպայի խորհուրդը՝ առավել արդյունավետ եւ օգտակար արդյունք ունենալու համար:

Նշենք, որ 2007-ից ԵԽԽՎ փոխնախագահի պաշտոնը զբաղեցրած Ժան-Կլոդ Մինյոնը միակ թեկնածուն էր ԵԽԽՎ նախագահի պաշտոնի համար, իսկ կանոնակարգի համաձայն՝ նա կարող է մեկ տարվա նախագահությունը երկարաձգել միայն մեկ անգամ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ստրասբուրգ

«Աբրահամ Լինքոլնը» մտել է Պարսից ծոց

Անցյալ հինգշաբթի Արաբական ծով մտած «Աբրահամ Լինքոլն» ամերիկյան ավիակիրը կիրակի օրը Օրմուզի նեղուցով մուտք է գործել Պարսից ծոց: Այդ մասին երեկ հաղորդեց Ռոյթեր գործակալությունը՝ վկայակոչելով ԱՄՆ 5-րդ նավատորմի ներկայացուցչին:

Ավիակիրը Պարսից ծոց է մտել մի խումբ ռազմանավերի ուղեկցությամբ, որոնց մեջ կան ոչ միայն ամերիկյան, այլեւ բրիտանական եւ ֆրանսիական նավեր: Գործակալության զրուցակցի խոսքերով՝ ավիակրի Պարսից ծոց մտնելը «նախապես» ծրագրված էր եւ անցավ առանց միջադեպերի»:

2011-ի դեկտեմբերից հետո «Աբրահամ Լինքոլնը» Պարսից ծոցի ջրատարածք մտած ամերիկյան առաջին ավիակիրն է եւ կփոխարինի այնտեղից հեռացած «Ջոն Սթեննիս» ավիակրին:

Եվրոմիությունն արգելեց իրանական նավթի ներմուծումը

Եվրոմիությունը երեկ ընդունել է իրանական նավթի ներմուծումն արգելող պատժամիջոցների փաթեթ: Բրյուսելում դիվանագետներից մեկը ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին ասել է. «Ձեռք է բերվել իրանական նավթի ներմուծման արգելքին առնչվող սկզբունքային համաձայնություն»: Պատժամիջոցները հունվարի 30-ին պաշտոնապես կհաստատվեն ԵՄ արտգործնախարարների հանդիպման ժամանակ:

Արտգործնախարարների երեկվա հանդիպման ժամանակ որոշվել է կիրառել իրանական նավթի ու նավթամթերքների ներմուծման բեռնարգելք, ինչպես նաեւ սահմանափակել ԵՄ պետական եւ մասնավոր կառույցների հարաբերությունները Իրանի Կենտրոնական բանկի հետ:

Եվրոմիությունը ներկայումս ներմուծում է Իրանում արդյունահանվող նավթի մինչեւ 40 տոկոսը: ԵՄ-ը Թեհրանից պահանջում է Արեւմուտքի հետ անհապաղ երկխոսություն սկսել Իրանում ուրանի հարուստացումը դադարեցնելու շուրջը:

«Քաջարի զինվոր» Իլհամ Ալիեւը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Սոչի մեկնելու նախօրեին, ինչպես գրում են Բաքվի լրատվամիջոցները, Իլհամ Ալիեւը եղել է «Գերանբոյի շրջանում տեղակայված N առաջնագծային զորամասում»: Թվում է՝ հերթապահ տեղեկատվություն է: Բայց աչքի են զարնվում «տեսչավորման» ե՛ւ ժամանակը, ե՛ւ վայրը:

Ժամանակի մասին արդեն ասվեց՝ դա տեղի է ունեցել Սոչի ուղեւորվելու տառացիորեն նախօրյակին: Վայրը Գերանբոյի շրջանն է, մի անվանում, որ չիրազեկված ընթերցողին գրեթե ոչինչ չի ասի: Իրականում, մինչդեռ, կարելի է վստահաբար պնդել, որ Իլհամ Ալիեւը եղել է արդեն գրեթե 20 տարի ադրբեջանական զինված ուժերի օկուպացիայի տակ գտնվող Շահումյանի շրջանում: Դեռեւս 1990 թ. Ադրբեջանի Գերագույն խորհուրդը լուծարել էր գերազանցապես հայաբնակ Շահումյանի շրջանը, միացրել Կասում Իսմայիլովի ադրբեջանաբնակ վարչատարածքային միավորին, իսկ արդեն անկախության տարիներին «միացյալ» տարածքին տրվել է «պատմական» Գերանբոյ անվանումը, որն, ի դեպ, ծագում է հայերեն Գերան գեղանունից:

Իլհամ Ալիեւի «տեսչական շրջագայությունն» անկասկած «համարժեք պատասխան» է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի Արցախ կատարած այցին: Միաժամանակ, սակայն, եթե հաշվի ենք առնում, որ Սոչի մեկնելուց առաջ Իլհամ Ալիեւը կարող էր մերձձակատային որեւէ այլ զորամասում լինել, ապա հարց է առաջանում, թե ինչո՞ւ է հատկապես ընտրվել Շահումյանը: Մի՞թե դրանով նա ցանկացել է ակնարկել, որ իրենք հայերից օկուպացրած տարածքներ ունեն:

Սա շատ հետաքրքրական նրբերանգ է, որ, հավանաբար, ավելի ճիշտ պատկերացում կարող է տալ ադրբեջանական կողմի իրական տրամադրվածության մասին: Այն է՝ առկա ռազմատարածքային իրավիճակում Շահումյանի շրջանի հանդեպ Բաքվի վերահսկողությունը հոգեբանորեն բավարարում է Իլհամ Ալեւին՝ որպես զինված ուժերի գլխավոր հրամանատար: Այսինքն, եթե Սերժ Սարգսյանը կարող է լինել նախկին ադրբեջանաբնակ տարածքներում, ապա ինքն էլ, ահա, «տեսչական ստուգայցով» Շահումյան է հասել, որտեղ մինչեւ 1992 թ. հայեր էին ապրում:

Տես էջ 3

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Ինչ պետք է փոխվի Հայաստանի գործարար միջավայրում

Բարեփոխումների 4 ուղղություններ՝ առաջիկա 3 տարիներին

Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ/IFC) Հայաստանում բիզնես միջավայրի բարելավման նոր ծրագիր կիրագործի առաջիկա 2-3 տարիների ընթացքում՝ 2012-ի փետրվարից մինչեւ 2014 հոկտեմբեր: Ծրագրի բյուջեն կազմում է 1,9 մլն դոլար, որից ՄՖԿ-ն կհատկացնի 1,8 մլն դոլար, մնացածը՝ Հայաստանի կառավարությունը: Այդ մասին համաձայնագիրը կառավարությունը հաստատեց իր նախորդ նիստին:

Ըստ վարչապետ Տիգրան Սարգսյանի, Doing Business 2012 զեկույցում Հայաստանը ընդգրկվել էր ամենաշատ բարեփոխումներ իրականացրած երկրների լավագույն տասնյակում: «2011-ի ընթացքում Համաշխարհային բանկի կառույցները, որոնք գնահատական են տալիս, արձանագրել են, որ Հայաստանը 6 քայլով առաջ է շարժվել, եւ Հայաստանում բիզնես միջավայրը բարելավվել է: Երկրորդ, արձանագրվել է, որ Հայաստանն աշխարհի միակ երկիրն է, որը 5 ուղղություններով առաջընթաց է արձանագրել, այսինքն, մեր բարեփոխումները արդյունք են տվել», նշել է նա եւ ավելացրել, որ դրանով է պայմանավորված կառավարության կողմից ՄՖԿ-ի հետ բիզնես միջավայրի բարելավման նոր ծրագրին հավանություն տալուն:

Միջազգային ֆինանսական կորպորացիայի հայաստանյան գրասենյակի ղեկավար **Արսեն Նազարյանն** էլ նշել է, որ Հայաստանի գործարար շրջանակներում իրենց հարցումները բացահայտել են, թե հատկապես ո՞ր բարեփոխումների արդյունքներն են զգացել գործարարները: Դրանք են սուգումները, որոնք դառնում են ավելի կանխատեսելի, թափանցիկ, ինչպես նաեւ ընդհանուր սուգումներից անցում է արվում ռիսկերի վրա հիմնված սուգումների: Բարձր ռիսկայնությամբ ընկերություններում սուգումները լինելու են տարին մեկ անգամ, միջին ռիսկայնությամբ՝ 3 տարին մեկ անգամ, ցածրերի մոտ՝ 5 տարին մեկ անգամ: Հաջորդը ընդամենը 15-20 րոպեում ձեռնարկություն գրանցելու հարցի լուծումն է, այնուհետեւ՝ արտահանման ոլորտում քայլերի նվազումը: Օրինակ՝ արտահանման համար անհրաժեշտ ծագման սերտիֆիկատի տրամադրման գործընթացի կրճատվելը:

ՄՖԿ-ի՝ Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների նոր ծրագիրն ուղղվելու է 4՝ հարկման, արտահանման ու ներմուծման, սննդամթերքի անվտանգության ու տեսչական սուգումների ոլորտներում վարչարարական բեռի եւ կանոնակարգման արգելքների կրճատմանը:

Սննդամթերքի անվտանգության ոլորտում Հայաստանին աջակցություն է ցուցաբերվելու ԵՄ սննդամթերքի անվտանգության սկզբունքներին համապատասխան օրենսդրություն մշակելու, ապա նաեւ սննդամթերքի անվտանգության ծառայությանը՝ ռիսկերի վրա հիմնված տեսչական համակարգի կիրառման հարցերում:

Տեսչական ոլորտի աջակցությունն ուղղվելու է ռիսկային չափանիշներին եւ սուգաթերթերին վերաբերող ենթաօրենսդրական ակտերի մշակմանը, սուգումների վերաբերյալ նոր օրենք մշակելու համար հայեցակարգային փաստաթուղթ նախագծելուն, սուգումներին համապատասխանության արժեքի հետազոտություն անցկացմանը, կառավարության մշակած «Շուկայի վերահսկողության մասին» օրենքի նախագծի վերանայմանը եւ ԵՄ կանոնակարգերի պահանջներին համապատասխանության համեմատական վերլուծության իրականացմանը, շուկայի վերահսկողության ոլորտում տեսչական գործունեության ռիսկերի կառավարման համակարգի կանոնակարգերի մշակմանը:

Արտահանման ու ներմուծման ոլորտում իրականացվելու է անդրսահմանային առեւտրի գործընթացների եւ մատակարարման ցանցերի բարելավում ագրոբիզնեսի 2 կարեւոր (արտադրանքները կորոշվեն քննարկումներով՝ ըստ կարեւորության) արտադրանքների համար եւ տրամադրվելու է տեխնիկական օժանդակություն:

Եվ վերջին՝ հարկման ոլորտում կմշակվեն տրանսֆերային գնագոյացման ցուցիչներ՝ ռիսկի վրա հիմնված սուգումների իրականացման նպատակով, աջակցություն կցուցաբերվի «բարեխիղճ» հարկ վճարողների սահմանման համար չափանիշներ մշակելուն, կբարելավվի շատ փոքր ընկերությունների հարկային ռեժիմը՝ ամենայն հավանականությամբ, արտոնագրային վճարի դաշտը կընդլայնվի: Սրան զուգահեռ աջակցություն կցուցաբերվի փոքր եւ միջին ընկերությունների հարկային հաշվառման առանձնահատկությունների, հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման, էլեկտրոնային վճարման վերաբերյալ հանրային իրազեկման քարոզարշավի իրականացմանը:

Վերոնշյալ բարեփոխումները անշուշտ կբարելավեն գործարար միջավայրը Հայաստանում, սակայն, լավ կլիներ, որ դրանք իրականացվեն ավելի սեղմ ժամկետում, քան նախատեսված գրեթե 3 տարին է: Տարածաշրջանային զարգացումներն ու համաշխարհային տնտեսությունից եկող մարտահրավերները ավելի արագ բարեփոխումներ են պահանջում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Ժառանգություն» խմբակցության անդամները կառաջադրվեն մեծամասնական կարգով

Երեկ մամուլի ակումբներից մեկում ՀՀԿ-ական **Սուփիաս Ավետիսյանի** հետ բանավեճի ֆորմատով լրագրողներին հանդիպած «Ժառանգության» պատգամավոր **Անահիտ Բախշյանը** հետաքրքրական հայտարարություն է արել, որ եթե 100 տոկոս համամասնական կարգի վերաբերյալ իրենց օրենսդրական նախաձեռնությունը չանցնի, «ժառանգությունը» եւ հասկապես կուսակցության խորհրդարանական խմբակցության ողջ կազմը կառաջադրվի մեծամասնական ընտրակարգով: Սուփիաս Ավետիսյանն էլ պնդել է, թե ընտրական օրենսգիրքն այլեւս չի փոխվելու, այնպես որ իրենց խորհրդարանական գործունեությամբ հայտնի ժառանգական պատգամավորներին կտեսնենք մեծամասնական ընտրատարածքներում օլիգարխների հետ պայքարելիս: Դե, ինչպես տեսնում ենք, մեծամասնականի դեմ պայքարողների մեծ մասը մտմտում է այդ կարգով հետագայում առաջադրվել, եւ մեծամասնականի շուրջը կենացները քաղցրանում են: Հետաքրքրական է, որ մեծամասնականով պատգամավոր դարձած Սուփիաս Ավետիսյանն այլեւս չի ուզում այդ կարգով առաջադրվել:

Մ. Խ.

11 կգ 200 գ թմրանյութ ճամպրուկում

«2011թ. դեկտեմբերի 29-ին, գիշերը Մեղրիի մաքսակետում Նախաբացթողումային հսկողության վարչության աշխատակիցները զննման են ենթարկել Իրանի քաղաքացի Սաիդ Միլանիին պատկանող ուղեբեռը, ճամպրուկի թափքոցից հայտնաբերվել է 11 կիլոգրամ 200 գրամ թմրանյութ»:

Դեպքի առթիվ ՊԵԿ քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ, Սաիդ Միլանիի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

ՊԵԿ-ի նախաբացթողումային հսկողության վարչության պետ Վահրամ Գուրողլյանի խոսքերով, փորձը ցույց է տալիս, որ «Թմրանյութի ներկրման դեպքերը հիմնականում բացահայտում ենք հայ-իրանական սահմանի վրա՝ Մեղրիի մաքսակետում: Միայն 2011 թվականի ընթացքում հայտնաբերվել է ավելի քան 10 նման դեպք»:

Ի դեպ, առանձնակի խոշոր 3 դեպքերով նույնպես ապօրինի ներկրման փորձը կատարել են Իրանի 3 քաղաքացի՝ տեղափոխելով թմրանյութ եւ հոգեմետ դեղորայք: Նշենք, որ 2011թ. ընթացքում նախաբացթողումային հսկողության վարչությունը մաքսային կանոնների խախտման շուրջ 500 դեպք է բացահայտել. 21 դեպքով հայտնաբերվել է բեռի թերի հայտարարագրում, 28 դեպքով էլ մաքսային ապահովման միջոցների բացակայություն կամ խախտում, իսկ 38 դեպքով արձանագրվել են այլ խախտումներ, տեղեկացնում է ՊԵԿ մամուլի ծառայությունը:

ԵՐԵՎԱՆ

ԱՍԱԼԱ-ի 37-ամյակին նվիրված երեկո Երեւանում

Օրեր առաջ «Առնո Բաբաջանյան» համերգային դահլիճում կայացել է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) հիմնադրման 37-ամյակին նվիրված հիշատակի միջոցառում: Այն բացել է «Ուխտ Արարատի» խորհրդի անդամ, բժ. գիտ. թեկնածու Հրանտ Աշճյանը, որից հետո բոլոր ժամանակներում ազգի անկախության, ազատության, արժանապատվության հաստատման ու պահպանման զոհասեղանին իրենց կյանքը նվիրաբերած նահատակների հիշատակը հարգվել է մեկ րոպե լռությամբ: Այնուհետեւ ներկաները հնարավորություն են ունեցել ծանոթանալու Գուրգեն Յանիկյանի խոսքով համեմված տեսագրությանը:

ԱՍԱԼԱ-ի պատմությունը համառոտ ներկայացրել են պատմ. գիտ. թեկնածու Գեւորգ Յազըճյանը, բան. գիտ. թեկնածու Կարո Վարդանյանը, գրականագետ, հրապարակախոս Գրիգոր Ջանիկյանը եւ այլք: Միջոցառմանը ներկա են եղել նաեւ ԱՍԱԼԱ-ի նախկին անդամներ Ալեք Ենիգոմշյանը, Մարտիրոս Ժամկոչյանը, Վազգեն Սիսլյանը, Հակոբ Ջուլֆայանը, Սիմոն Նաիրյանը: Ցուցադրվեցին տեսաերիզներ, հնչեցին երգեր ու բանաստեղծություններ:

Իսկ հաջորդ օրը, Եռաբլուր պանթեոնում միջոցառման մասնակիցները ներկա գտնվեցին ԱՍԱԼԱ-ի եւ Արցախյան հաղթական ազատամարտի հերոս նահատակների հոգեհանգստի արարողությանը:

Մ. Մ.

Վարչապետի սուգայցը ճանապարհային ոստիկանության բաժանմունքներ

Ինչպես տեղեկացանք կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, վարչապետ Տիգրան Սարգսյանն սուգայց է կատարել ՀՀ ճանապարհային ոստիկանության Երեւանի թ.2 հաշվառման քննական բաժանմունք: Նա ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի ուղեկցությամբ ծանոթացել է վարորդական իրավունքների ստացման, տրանսպորտային միջոցների հաշվառման ընթացակարգերին: Այնուհետեւ Տիգրան Սարգսյանն այցելել է Նուբարաշենում գտնվող ՀՀ ճանապարհային ոստիկանության Երեւանի հաշվառման քննական նորակառույց բաժին, որը նախատեսվում է շահագործման հանձնել 2012-ի ապրիլին: Այստեղ եւս կիրականացվեն վարորդական իրավունքների տրամադրում, տրանսպորտային միջոցների հաշվառում եւ այլն: Բաժինը հագեցած է լինելու ժամանակակից սարքավորումներով, որտեղ ներդրվելու է ծրագրային տվյալների միասնական բազա: Այս ամենի շնորհիվ քաղաքացիները կսպասարկվեն էլեկտրոնային եղանակով՝ առավելագույնը 15-20 րոպեի ընթացքում:

Ավելացնենք, որ վարորդական իրավունքների տրամադրման եւ մեքենաների պետական հաշվառման ոլորտներում եղած լուրջ խնդիրների մասին բազմիցս անդրադարձել ենք մեր թերթում:

Ա. Մ.

Եղանակը առաջիկա օրերին

«Ազգը» «Հայպետհիդրոմետ» ծառայությունից տեղեկացավ, որ առաջիկա հինգ օրերին հանրապետության շրջանների զգալի մասում եւ նաեւ մայրաքաղաքում կտեղա ձյուն, տեղ-տեղ կդիտվի մառախուղ: Հունվարի 24-ին եւ 25-ին Երեւանում ցերեկը սպասվում է առանց տեղումների եղանակ, իսկ 26-ին, 27-ին եւ 28-ին կտեղա ձյուն: Առաջիկա երկու օրերին օդի ջերմաստիճանը կնվազի 2 աստիճանով, սպասվում է քամու ուժգնացում մինչեւ 15 մ/վրկ: Արարատյան դաշտավայրում գիշերը սպասվում է 4-6 աստիճան ցուրտ, ցերեկը՝ -1+1: Երեւանում ժամանակ առ ժամանակ սպասվում է ձյուն: Առաջիկա երկու օրերին ջերմաստիճանի նվազում է սպասվում մինչեւ 5-7 աստիճան, իսկ ցերեկվա ժամերին այն կլինի 0-ին մոտ: 25-ին սպասվում է -6-8 ցուրտ գիշերը, ցերեկը՝ 0-2 ցուրտ: 26-ին՝ -2-4 ցուրտ գիշերը, ցերեկը՝ -1+3, 27-ին եւ 28-ին -1-3 գիշերը, ցերեկը՝ 1+3 աստիճան տաքություն, քամի:

Մ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Փոքր երկիր» Թուրքաս...

Ուրիշին սի մեջ մեղադրող Չավուշօղլուն առաստրեն է ստում

Ի՞նչպես կարելի է գնահատել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ ղարաբաղյան հարցով ենթահանձնաժողովի որեւէ ակտիվության բացակայությունը ԵԽԽՎ թուրք նախագահ Մելիութ Չավուշօղլուի նախագահության ժամանակ :

«**Ազգի**» այս հարցին, հավելմամբ, թե արդյոք նույն ինքը՝ Չավուշօղլուն համաձայն է այդ ենթահանձնաժողովը վերականգնելու նախաձեռնության ձախողմանը, ԵԽԽՎ արդեն նախկին նախագահը երեկվա ասուլիսում բորբոքված արձագանքեց, թե «դա ճիշտ չէ, դա իմ նախաձեռնությունը չէ», թեեւ մեր հարցում նախաձեռնությունն իրեն վերագրելու ոչ մի բառ չկար: Չավուշօղլուն հերթական անգամ մեղադրեց ինչպես Հայաստանի իշխանություններին, այնպես էլ մամուլին՝ «հայ ժողովրդին ճիշտը չասելու համար»:

Ըստ թուրք ԵԽԽՎ-ականի, իր մանդատի ավարտին հայ գործիչներն ու մամուլը արդար չեն իր նկատմամբ, քանի որ «դա ԵԽԽՎ բյուրոյի որոշումն էր՝ վերականգնել ենթահանձնաժողովի աշխատանքները»: «Հիմա էլ բյուրոն պետք է որոշի՝ նորից վերականգնի՞ այդ հանձնաժողովի աշխատանքը, թե՞ ոչ», արձագանքեց Չավուշօղլուն չինչեցված հարցին ու այդպես էլ չպատասխանեց «**Ազգ**»-ի բուն հարցին, թե ինչպես է գնահատում իր նախագահության ընթացքում ենթահանձնաժողովի «կատարած աշխատանքը»:

«Բոնեֆ գողին», առավել հաճախ բոլորից բարձր գոռում են հենց գողերը, նույն կերպ այն բոլոր մարդկանց մասին, ովքեր ստելու սեր ունեն, ուրիշներին դրանում մեղադրելու հարցում էլ ոչ մի ստի առաջ չեն կանգնում: Չավուշօղլուն շտապեց հայերին մեղադրել ստելու մեջ, մինչդեռ ANF EUFRAAT քրդական լրատվական գործակալության լրագրողի հարցին ի պատասխան ինքն ընկավ ստի հորձանուտը:

Քուրդ լրագրողը հետաքրքրվեց, թե ինչո՞ւ ԵԽԽՎ-ն անտարբեր է մնում Թուրքիայում մամուլի վիճակի առնչությամբ, երբ 101 ձերբակալված ու կալանված լրագրող կա այդ երկրում: ԵԽԽՎ նախկին նախագահն ամենայն համառությամբ փորձում էր ներկայացնել, թե իբր հենց միջազգային կազմակերպությունների գնահատականներով՝ Թուրքիայում միայն 9 լրագրող է ձերբակալված:

Այլեւս խնդրահարույց չթողնելով, թե ոչ ճիշտ տեղեկություններն ով եւ ինչպես է տարածում, Չավուշօղլուն, քուրդ լրագրողի պնդմանը՝ 100-ից ավելի լրագրողների անազատ վիճակի մասին, հայտարարեց, թե այդ տվյալները «մատչելի են, թափանցիկ», մոռանալով, թե ում համար:

Իսկ ասուլիսի ավարտին Չավուշօղլուն իր մաղձը ներկայացրեց լրագրողներին՝ ինքն իրեն հարց տալով ու պատասխանը մատուցելով: «Ես սպասում էի Ֆրանսիայի Սենատում ցեղասպանությունների հերքումը քրեականացնող բանաձեւի մասին հարցին, բայց, կարծում եմ, դուք հետաքրքրված չեք խոսքի ազատությամբ այն երկրում, որ այս կառույցի (ԵԽԽՎ - Ա. Հ.) հյուրընկալողն է», լրագրողներին մեղադրելով հայտարարեց Չավուշօղլուն:

Ի ցույց դնելով եւս մեկ անգամ, որ թուրք խորհրդարանականի համար կեղծելը մեծ դժվարություն չի ներկայացնում, բազմազգ լրագրողական լսարանում Չավուշօղլուն նախ «սահմանադրական» ներկայացրեց Ֆրանսիայի Սենատի իրավական հարցերով հանձնաժողովը, որ դեմ է արտահայտվել ցեղասպանությունների հերքումը քրեականացնող օրինագծին: Բանաձեւը մեկնաբանելով որպես խոսքի ազատությունը սահմանափակող՝ ԵԽԽՎ նախկին նախագահը հռետորական հարց տվեց. «Եթե նման օրինագիծ քննարկեին Հայաստանում, անգամ Հայաստանում, Թուրքիայում կամ Ադրբեջանում, Ռուսաստանում կամ Ուկրաինայում, ի՞նչ կլիներ...»:

Հիշեցնելով, թե «ինչ ճնշում գործադրվեց Թուրքիայի վրա fr. or.-ի 301 կետի պատճառով, որ նման բաներ էր պարունակում», Չավուշօղլուն հետաքրքրական համեմատություն արեց. «Եվրոպայի խորհուրդը կամ Եվրոմիությունը կրկնակի ստանդարտներ են կիրառում. երբ փոքր երկիր է, բոլորս միասին ռեակցիա ենք տալիս, իսկ երբ մեծ երկիր է, լուռ ենք մնում»: Չավուշօղլուն ակնհայտորեն տվյալ դեպքում որպես փոքր երկիր նկատի ունի Թուրքիային, ու թերեւս այդ մասին պետք է տեղեկացնել հավակնող նախագծերով արաբական աշխարհի անցուդարձին ու նաեւ տարածաշրջանի իրավիճակին խառնվելու մեծ ցանկություն ունեցող Թուրքիայում իշխող կուսակցության վերնախավին:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
Ստրասբուրգ

Ալիեւը փաստացի պատրաստ է ամեն ինչ ստորագրել, իսկ իրականացնե՞լ...

1-ին էջից

Երեք երկրների նախագահները նաեւ «ի գիտություն ընդունեցին համանախագահների եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի՝ շփման գծի երկայնքով միջադեպերի հետաքննության անցկացման մեխանիզմի վերաբերյալ համատեղ մշակած զեկույցը» եւ հանձնարարել են շարունակել այդ աշխատանքը: Մինչ եռակողմ հանդիպումն էլ պաշտոնական Մոսկվայի տարածած հաղորդագրությամբ հույս էր հայտնվել, թե կարճ ժամանակում հնարավոր կլինի ավարտել միջադեպերի հետաքննության մեխանիզմների առնչությամբ տարվող աշխատանքները:

Ըստ հայտարարության, երեք նախագահներն ընդգծել են ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ կատարված աշխատանքի մեծ ծավալը՝ 2008-ի նոյեմբերի 2-ի հանդիպումից, երբ ընդունվեց մոսկովյան հռչակագիրը: «Ինտենսիվ բանակցությունների արդյունքում առաջընթաց է ձեռք բերվել ԼՂ կարգավորման հիմնարար սկզբունքների համաձայնեցման շուրջը», վերջին շրջանի բոլոր «զրո արդյունքի» մասին արվող դատողություններին մեկ տողով հայտարարության մեջ արձագանքել են նախագահները, նաեւ պատրաստակամություն հայտնելով «արագացնել հիմնարար սկզբունքների շուրջը պայմանավորվածությունների ձեռքբերումը՝ հավի առնելով մինչ այժմ իրականացված աշխատանքը»:

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները բարձր են գնահատել Ռուսաստանի Դաշնության եւ ԵԱՀԿ Մինսկի համանախագահ մյուս երկրների միջնորդական առաքելությունը, հույս հայտնելով, որ «Ռուսաստանը, ԱՄՆ-ն եւ Ֆրանսիան այդ կարգավիճակում հետագայում եւս ակտիվ դերակատարություն կունենան կարգավորման գործում՝ ընդհուպ տարածաշրջանում վերջնական խաղաղության ու կայունության հաստատումը»:

Մինչ հանդիպումը, ըստ «Ռիա Նովոստի» գործակալության, Ռուսաստանի նախագահի նստավայրից հաղորդագրությամբ հիշեցում էր արվել այն մտահոգությունների մասին, որ կապված են «հրադադարի ռեժիմի հաճախակի խախտման, զինվորականների եւ խաղաղ բնակիչների զոհերի, նաեւ երկու կողմերի ռազմատենչ հռետորաբանության» հետ: Այս առումով էլ Ռուսաստանը համառորեն փորձում է կողմերին համոզել, որ վստահության ամրապնդումն անհրաժեշտություն է:

Հերթական անգամ Ադրբեջանի նախագահը ստորագրել է մի փաստաթուղթ, որ պարտավորություններ է առաջացնում, սակայն թե որքանո՞վ է Ալիեւ կրտսերը հետեւողական իր խոստերի, անգամ ստորագրությունների առումով՝ ժամանակը միշտ նույնն է ապացուցում. այս մարդու պարագայում ասելը, ստորագրելը եւ անելը իրարից մղոնաչափ հեռու բաներ են...

Մյուս կողմից, գոնե Ռուսաստանին հատուկ շնորհակալությամբ ՌԴ նախագահ Մեդվեդեւը կհանձնի իր լիազորությունները, իսկ թե Ֆրանսիան իսկապես կդառնա նախաձեռնող համանախագահողը՝ առանձնակի հուսադրող չէ, քանի որ Ալիեւի տեսակն այդ փոխատեղումից հաստատ չի փոխվի:

ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ

Ցմահ ազատազրկվածները՝ Հայաստանի նախագահին

Life.imprisonment@yahoo.com հասցեից «**Ազգը**» երեկ մի բաց նամակ էր ստացել, որտեղ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին է դիմել «Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի» ցմահ ազատազրկված դատապարտյալների մի խումբ. «Հարգելի պրն Ս. Սարգսյան, մեր ծանր հոգեֆիզիկական վիճակն ու ձայնը Ձեզ հասցնելու այլ ելք չգտնելով, որոշեցինք ծայրահեղ ու ոմանց համար գուցե եւ ճակատագրական քայլի գնալ:

Արդեն մի քանի օր ցմահ դատապարտվածների մի խումբ հացադուլ է հայտարարել, եւ նրանցից մեկը՝ Գուրգեն Ռազմիկի Սարգսյանը, որն այդ արել էր կարած բերանով, առողջական լուրջ խնդիրներ ունեցավ, այնուամենայնիվ, բոլորիս պահանջ-խնդրանքը միանշանակ է ու շարունակելի՝ 19.01.2012 հացադուլավորների խմբին միացան եւս երկուսը՝ Հարություն Նուրիջանի Խաչատրյանն ու Արեն Լեռիկի Ջատինյանը:

Խնդրում ենք՝ տվեք մեզ համներման իրավունքից օգտվելու հնարավորությունը, որն ավելի ուղղիչ ու պարտավորեցնող կլինի, քան...

Հավատացնում ենք, ցմահ դատավճիռ կայացնելու պահին, դատարտյալը մինչեւ իր վերջին բջիջը այնքան խորն է ապրում ու կրում այդ պատիժը, որ մնացած տարիներին ոչինչ չի մնում ավելացնելու, թերեւս միայն չարությունը...

Հնարավորություն տվեք զգալ մեր թիկունքում հայրենիքի շունչը, չէ՞ որ այդ նույն հայրենիքի համար մենք էլ ենք կռվել ու պայքարել.... Էլ չենք ասում, որ մեզանից մեկը՝ Արեն Լեռնիկի Ջատինյանը, այն ժամանակ դեռ 22 տարեկան, Ղարաբաղի Մարտակերտի սահմանները պատվով պաշտպանելուց ուղիղ 2 ամիս անց արժանացավ այդ դաժան ճակատագրին, ու ոչ մի մեղմացուցիչ հանգամանք չկիրառվեց նրա հանդեպ (ինչ է թե վնասել էր կամրջի տակ իր ժամկետանց վկայականն անհարկի շահարկող, փող շորթող ոստիկանին): Անգամ անտեսեցին ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությունը՝ «Անձի շիզոյիդ խանգարում» բնորոշմամբ (եզրակացություն No 7615.07.2008 թ): Ի դեպ, այդ հիվանդությունը նա վաստակել է բանակում, այդ նույն հայրենիքի սահմանները պաշտպանելիս», գրել են ցմահ ազատազրկվածները Հայաստանի նախագահին:

Մ. Խ.

Ջհանգիրյանին Պրեսկոտը խոստում է տվել

ՀԱԿ-ի պատահրավական հանձնախումբն արձագանքել է մարտի 1-2-ի դեպքերի հետ կապված հատուկ քննչական ծառայության՝ իր վարույթում գտնվող քրեական գործով անցած դեկտեմբերին արված հաղորդմանը: Այս մասին երեկ ասել է ՀԱԿ-ական Գագիկ Ջհանգիրյանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ: ՀԱԿ-ի պատահրավական հանձնախմբի դիտարկումները ներկայացնելով՝ նա նկատեց, թե ծավալուն փաստաթղթի ծանոթացումը ոչ միայն չի փարատել կասկածները գործի քննության օբյեկտիվության, բազմակողմանիության ու լրիվության ապահովման առումով, այլեւ հարուցել է նորերը: Հանձնախմբի ղեկավար Գ. Ջահանգիրյանը հանձնախմբի ծավալուն դիտարկումներից մի քանիսի վրա կանգ առնելով՝ նաեւ գնահատականներ հնչեցրեց, թե ՀՔԾ-ի դեկտեմբերյան հաղորդումով կրկին պարզ է դարձել, որ գործող իշխանությունների օրոք մարտի 1-ի կատարված սպանությունները չեն բացահայտվի, եւ ՀՔԾ զեկույցով իշխանությունները փակում են մարտի 1-ը: Ջհանգիրյանը նաեւ ասում էր, թե ԵԽԽՎ մոնիտորինգի խմբի հայաստանի հարցով համազեկուցող Ջոն Պրեսկոտն իր հետ հանդիպմանը խոսք է տվել զեկույց չգրել, մինչեւ ՀԱԿ-ի տեսակետը չստանա:

Մ. Խ.

«Քաջարի զինվոր» Իլհամ Ալիեւը

1-ին էջից

Նման մոտեցումը տրամադրում է կարծելու, որ Իլհամ Ալիեւը Սոչի է մեկնել կատարելապես գիտակցելով, որ ընթացիկ եւ հաջորդ տարիներին կարգավորման բանակցություններում նոր զարգացումները գրեթե բացառվում են, որ միջնորդները ներկա աշխարհաքաղաքական պայմաններում նպատակադրված են ընդամենը «կառավարել» իրավիճակը: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ Իլհամ Ալիեւի այնքան սիրած արտահայտությունը, թե «ստատուս քվոն անընդունելի է», կամ միայն սեփական ընկալում է, կամ այդ կերպ ինքն էլ իր հերթին Ադրբեջանի ներքին կյանքն է կառավարում:

Իսկ առհասարակ, լինելով Շահումյանի օկուպացված տարածքներում, Իլհամ Ալիեւը հոգեբանական փոխհատուցման խնդիր է լուծել: Եվ, ըստ երեւույթին, դրանով հասկանալի դարձրել, որ իրավիճակի փոփոխության մտադրանքի փոխարեն հարկ է ընդգծել այն, ինչ տվյալ պահին խորհրդանշում է ադրբեջանական կողմի՝ հակամարտության զինված փուլից ունեցած ձեռքբերումը՝ Հյուսիսային Արցախի հայաթափումը:

Այդ ռազմական հաջողությունն Ադրբեջանը ձեռք է բերել Գյանջայում տեղաբաշխված՝ նախին խորհրդային զորամիավորումների ամենագործուն մասնակցությամբ: Թերեւս նույն օրը Գյանջայում լինելն էլ Իլհամ Ալիեւը փորձել է խորհրդանշել 20-ամյա վաղեմության «լավագույն հիշողություններով»: Իսկ եթե նկատի առնվի, որ դրանից անմիջապես հետո նա ուղեւորվել է ՌԴ նախագահի հետ հանդիպմանը, որի ընթացքում, անկասկած, նրանք քննարկելու են Գաբալայի ռադիոլոկացիոն կայանի հետ կապված հարցեր, ապա գուցե Իլհամ Ալիեւը ռուսական կողմին ինչ-որ ակնարկնե՞ր է փորձում անել:

Այդուհանդերձ, բուն իմաստով նրա «ռազմաճակատային շրջայցը» չի ստացվել: Այնքան, որ նույնիսկ նախագահի պաշտոնական կայքէջը է անզոր գտնվել՝ «գերագույն գլխավոր հրամանատարին ներկայացնելու իր ողջ բոնապարտիզմով»: Տարածված այս լուսանկարը վկայում է, որ Իլհամ Ալիեւը առաջնագծում չի եղել, այլ ինչ-որ բուտֆորային միջավայրում մի քանի վայրկյան նայել է ուղեկցողներին: Վերջիններս էլ միանգամայն ճիշտ են ընկալել եւ նրան «հավերժացրել մարտական դիրքում»:

Ջրծաղկի «ուրվականը»

Համաճարակ չկա , բայց փաստերն անհանգստացնող են

Բնակչության մսահոգությունը, թե Հայաստանում ջրծաղկի բռնկում է սկսվել, մասնագետները չեն ընդունում:

Պետական հիգիենիկ ու հակահամաճարակային տեսչության վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության բաժնի պետ **Լիլիթ Ավետիսյանը** վստահեցնում է, որ վարակիչ հիվանդությունների առումով հիմա հանգիստ վիճակ է, չկան համաճարակ ու բռնկումներ:

Մինչեւ Ամանորը տեղեկացանք, որ դեկտեմբերին ջրծաղկի պատճառով փակվել է Երեւանի մանկապարտեզներից մեկը, իհարկե ժամանակավոր: Սակայն Լիլիթ Ավետիսյանը ժխտում է, թե ջրծաղկի պատճառով դպրոց կամ մանկապարտեզ է փակվել:

Տեսչությունը վստահեցնում է, որ հանրապետությունում չկա համաճարակ, բայց բնակչության շրջանում մսահոգությունը շարունակվում է, ինչի առիթ է եւ զորամասում ջրծաղկով հիվանդացած զինվորի մահը:

Մանկաբույժ **Արթուր Մարտիրոսյանն** ընդգծում է, որ վարակիչ հիվանդություններն ունեն «ալիֆավոր ընթացք», այսինքն՝ եթե մի տարում լինում է հիվանդների թվի ավելացում, ապա մյուս 2-3 տարիներին նկատվում է հիվանդների թվի նվազում:

Ջրծաղիկը, որն օդակաթիլային վարակ է, ավելի շատ տարածված է նախադպրոցական տարիքի երեխաների մեջ, իսկ ավելի ընդհանրական՝ մինչեւ 10-12 տարեկանների մեջ: Հավանականությունը, որ ջրծաղկով հիվանդի հետ շփվելուց այս տարիքի երեխաները կհիվանդանան, գրեթե 90 տոկոս է: «Իսկ 18 տարեկանից բարձրերի մեջ հիվանդանալու հավանականությունը նվազում է մինչեւ 40-50 տոկոս», ասում է Արթուր Մարտիրոսյանը: Սակայն բժիշկը հավաստիացնում է՝ ով մեկ անգամ հիվանդացել է ջրծաղկով, ապա կյանքի ընթացքում էլ չի վարակվի:

Իսկ բոլոր նրանց, ովքեր չեն վարակվել ու չեն էլ ուզում վարակել իրենց կամ իրենց երեխաներին, բժիշկները խորհուրդ են տալիս չշփվել հիվանդի հետ կամ նրա հետ շփումը հասցնել նվազագույնի: Հավանականություն կա, որ հնարավոր է վարակվել եւ այն մարդուց, որի դեպքում հիվանդությունը դեռեւս գաղտնի, այսպես ասած ինկուբացիոն շրջանում է:

3-րդ անձի միջոցով վարակը չի տարածվում, այսինքն՝ ով շփվել է հիվանդի հետ, վարակը չի փոխանցի ուրիշին:

Իսկ նրանց համար, ովքեր չեն կարողանում հիշել՝ արդյոք պատվաստվել են ջրծաղկի դեմ տարիներ առաջ, 2 զրուցակիցներս տեղեկացնում են, որ պատվաստումների ազգային օրացույցում ջրծաղկի դեմ պատվաստում չունենք ու երբեւէ չենք ունեցել:

Ախտանիշերն ու զարգացումը

Միջինը՝ 5-7 օր, ընդհուպ 2 շաբաթ տեւում է ջրծաղկի միայն գաղտնի շրջանը, որի ընթացքում ախտանիշերը չեն երեւում: Գաղտնի շրջանին արդեն հաջորդում են գլխացավը, թուլությունը, քթից արտահոսքն ու ջերմը: Այդ ժամանակ հնարավոր է, որ արդեն երեւա եւ ցանը մարմնի վրա՝ դեմքի, կրծքավանդակի, գլխի մազածածկի տակ, որը հիվանդը կարող է եւ չնկատել:

Արթուր Մարտիրոսյանը նշում է, որ ջրծաղիկը տեւում է շուրջ 21 օր, դրսեւորվում է սկզբնական, ծաղկման, այսինքն՝ բուռն զարգացման եւ վերականգնման շրջաններով:

Ծանր շրջանում ցանկալի է, որ հիվանդը պառկի անկողնում: Իսկ ընդհանուր առմամբ՝ բուժումը լինում է դեղորայքային:

Լիլիթ Հովհաննիսյանն էլ խորհուրդ է տալիս՝ հենց առաջին ախտանշանների երեւալու դեպքում դիմել բժշկի, այլ ոչ թե զբաղվել ինքնաբուժությամբ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ինչո՞ւ ընթացք չի տրվում խաղաղության բողոքին

«**Ազգը**» հունվարի 20-ին անդրադարձել էր Երեւանի խաղաղության Տարոն Մարգարյանի այն որոշմանը, որ խաղաղի մայթերից պետք է աստիճանաշժվեն կրպակները: «Աբովյան փողոցում կրպակների աստիճանաշժումը շարունակվում է» վերնագրությամբ հոդվածում նշվել էին Աբովյան փողոցում դեռ գործող մի քանի կրպակների, ռեստորանների անուններ, նաեւ Աբովյան 3 եւ «Տերանովա» խանութների առանցքում գտնվող կիսակառույցի տիրոջ կողմից մայթը մետաղյա ցանկապատով տարիներ շարունակ փակելու եւ անցորդների համար դժվարություններ ստեղծելու փաստը: Իսկ թե ե՞րբ է քանդվելու ու վերականգնվելու մայթը՝ հարցին Երեւանի գլխավոր ճարտարապետ **Նարեկ Սարգսյանը** հոդվածն ընթերցելուց հետո իր վարչության պետերից մեկին (Աշոտ Հակոբյան) հանձնարարել էր տեղում ստուգել ու զեկուցել: «**Ազգը**» ներկա եղավ այդ ստուգողական այցին, եւ այժմ ներկայացնում ենք մանրամասներ:

Թերթին ուղարկած իր դիմումբողոքում Աբովյան 3 հասցեի սեփականատեր Աննա Մարտիրոսյանը ներկայացրել էր երեք կարեւոր փաստաթուղթ: 2011 թ. մարտի 3-ին դիմել է խաղաղապետարանի խաղաքաղաքաշինության եւ հողօգտագործման բնապահպանության հանձնաժողովի նախագահ պրն Պետրոսյանին, որով առաջարկել է «կայացնել որոշում, որի հիման վրա իմ անձնական ֆինանսների հաշվին կբարեկարգեմ եւ մայթը կբերեմ նախկին տեսքին ընդամենը 12 ժամվա ընթացքում»:

Պրն Պետրոսյանը 2011 թ. մարտի 30-ին սեփականատիրոջ է ուղարկել հանձնաժողովի եզրակացությունը, որ համաձայն են առաջարկությանը: Սակայն անցնում են ամիսներ, եւ սայլը տեղից չի շարժվում: Աննա Մարտիրոսյանը կրկին դիմում է խաղաղապետարան: Եվ ի վերջո հունիսի 13-ին տիկին Մարտիրոսյանին է ուղարկվում պատասխան՝ խաղաղապետարանի աշխատակազմի ճարտարապետության եւ խաղաղականության վարչության պետ Ա. Քասարյանի ստորագրությամբ, որտեղ սեւով սպիտակի վրա գրված է. «Ի պատասխան Երեւանի խաղաղապետին հասցեագրված Ձեր դիմումի, կապված Աբովյան փող. թիվ 5 հասցեով տարածքում դադարեցված շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատը Աբովյան փող. մայթից հանելու, մայթը բարեկարգելու եւ անխափան հետիոտն շարժում ապահովելու հարցի հետ, հայտնում ենք, որ Երեւանի խաղաղապետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից ներկայումս աշխատանքներ են իրականացվում տվյալ խնդրի վերջնական կարգավորման նպատակով»:

Հետաքրքրական է, թե անցած 8 ամիսների ընթացքում ինչո՞ւ չի լուծվել այդ հարցը, որը սեփականատերը առաջարկել էր ընդամենը 12 ժամում վերականգնել: Իսկ այժմ, երբ լայն թափով ընթանում են Աբովյան փողոցի վրա գտնվող կրպակների ու խանութների ապամոնտաժման աշխատանքները, ինչո՞ւ չի քանդվում մայթը արգելափակած ցանկապատը, որպեսզի անցորդները իրենց կյանքը չվտանգելով անցնեն մոտ 45 մետր տարածքը: Հուսանք՝ այս հարցերի պատասխանը գրավոր կուղարկվի «**Ազգին**», նաեւ պրն Սարգսյանի հետեւողականությունը՝ բարձրացված հարցերին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՅԺ

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է բելառուսական «Պրոմագրոլիզինգ» ընկերության պատվիրակությանը

Հունվար ամսվա սկզբին ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի՝ Բելառուսի Հանրապետությունում նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի, Անվտանգության խորհրդի պետական քարտուղար Լեոնիդ Մալցեւի, գյուղատնտեսության եւ պարենի նախարար Միխայիլ Ռուսիի եւ այլ պաշտոնատար անձանց հետ հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն Հայաստան է այցելել գյուղատնտեսական սարքավորումների եւ տեխնիկայի ազգային լիզինգային օպերատոր «Պրոմագրոլիզինգ» ընկերության պատվիրակությունը:

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է ընկերության պատվիրակությանը՝ գլխավոր տնօրեն Պավել Կրուպենովի գլխավորությամբ:

Քննարկվել են առաջիկայում Հայաստանի Հանրապետությունում ընկերության ներկայացուցչության ստեղծմանն առնչվող հարցեր:

Արթուր Բաղդասարյանը նշել է, որ իր բելառուսյան հանդիպումների ընթացքում ամենաբարձր մակարդակով կարեւորվել է այս ոլորտում համագործակցության խթանման անհրաժեշտությունը եւ տրվել են հստակ հանձնարարականներ: ԱԱԽ քարտուղարը համոզմունք է հայտնել, որ փոխշահավետ պայմաններում իրականացվող այս միջպետական համագործակցությունը կլինի առավելապես արդյունավետ, եւ ընդգծել է այս ոլորտում փոխգործակցության կարեւորությունը Հայաստանում պարենային անվտանգության ապահովման, ինչպես նաեւ գյուղատնտեսության ոլորտի հետագա զարգացման առումով:

Ընկերության գլխավոր տնօրենի խոսքով՝ ընկերությունն առաջարկում է համալիր ծառայությունների փաթեթ, որով գյուղտեխնիկայի եւ սարքավորումների տրամադրումն ընթանում է տեխնիկայի ընթացիկ սպասարկման, փորձի փոխանակման եւ տեղական մասնագետների վերապատրաստման նպատակով իրականացվող մասնագիտական այցերով, ինչպես նաեւ համապատասխան խորհրդատվական ծառայությունների մատուցմամբ:

Այցի ընթացքում պատվիրակությունը հանդիպումներ կունենա հայաստանյան գործընկերների, այդ թվում՝ գյուղատնտեսության եւ էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչների հետ, գործնական հիմքերի վրա կդրվեն նախապես ձեռք բերված պայմանավորվածությունները: Նախատեսված ժամանակացույցով Հայաստանի Հանրապետությունում փետրվար ամսին կիմնվի ընկերության ներկայացուցչությունը եւ Հայաստան կներկրվի բելառուսական արտադրության գյուղտեխնիկայի առաջին խմբաքանակը:

Արմեն Կիրակոսյանի նոր հատորը ցեղասպանության մասին

«Ցեղասպանությունների ժամանակ հրատարակված լրագրողական հաղորդագրությունների հավաքման մեթոդաբանությունը արտակարգ հզոր գործիք է պատմական փաստերը հաստատելու եւ պայքարելու ընդդեմ կոծ ժխտողականության: Հանգուցյալ Ռիչարդ Քլոյանը առաջինն էր, որ օգտագործեց այդ գործիքը «Նյու Յորք թայմսի» եւ Հայոց ցեղասպանության վերաբերյալ այլ աղբյուրների պատմությունները հիանալիորեն հավաքելով իր գրքում, որի վերնագիրն էր՝ «Հայոց ցեղասպանությունը: Նոր վկայություններ 1915-1922 թթ. ամերիկյան մամուլից» (Ռիչմոնդ, Կալիֆոռնիա): Արման Կիրակոսյանն այժմ նման աշխատանք է կատարել 1894-96 թվերի ցեղասպանական կոտորածների վերաբերյալ: «Ամաչում եմ նշել Իսրայելում վերջերս ունեցած իմ հանդիպումների մասին լուրջ ակադեմիական գիտնականների հետ, որոնք հայերի ցեղասպանությունը որոշ չափով տրամաբանական պատասխանն են համարում թուրքական իշխանությունների կողմից ընդդեմ հայերի ապստամբությունների: Կարելի է ավելացնել, որ որոշ դեպքերում ակադեմիական գիտաշխատողները Իսրայելում գտնվում են պրոֆ. Բեռնար Լյուիսի նկատմամբ ցուցաբերված անհարկի հարգանքի ազդեցության տակ: ...Ճշմարտությունն իմանալը 1894-96 թվերի ցեղասպանության մասին այսպիսով ավելին է, քան սոսկ պատմական իրադարձության մասին տեղյակ լինելը, քանի որ դա բացահայտում է ոչ մահմեդական «օտարի» հանդեպ թուրքերի տածած հիմնական ատելությունը, որ յուրահատուկ է թուրքական մշակույթին»:

Այս խմբագրական տողերով է Իսրայել Ջառնին ներկայացնում դոկտ. Արմեն Կիրակոսյանի նոր գիրքը՝ «1894-96 թվերի հայկական կոտորածները» վերնագրով, որի ներածությունը գրել է ինքը՝ հեղինակը, իսկ առաջաբանը՝ լորդ Շեռնոնը:

Ներկայացված նյութերը վերցված են «Սփեթթեյթր», «Ֆորթնայթլի ռիվյու», «Կոնտեմպորարի ռիվյու», «Նայնթին սենչըրի» եւ «Բլեքվուդս մագազին» թերթերի եւ պարբերականների 1890-1896 թթ. համարներից:

Հատորը համարվում է 20 տարի հետո իրականացված ավելի մեծ չափսերի Եղեռնի առաջին, սկզբնական փուլի գլխավոր փաստավավերագրությունը:

Հ. Ծ.

Կատարելապես ձախողվեց հարեւանների հետ խնդիրները զրոյականացնելու թուրքական դիրքորոշումը

Սիրիայից ու Իրանից հետո Թուրքիան հարաբերություններն աննախադեպ սրում է նաեւ Իրաքի հետ

Հունվարի 17-ի համարում, «Արաբական գարունը» համարելով անցյալ տարվա ամենաաղմկահարույց իրադարձությունը, նշել էինք, որ դա տարածաշրջանում ժողովրդավարության հաստատմանը այնքան է նպաստելու, որքան նպաստեցին հակաֆղանական եւ հակաիրաքյան պատերազմները կամ Լիբիայի նախագահ Մուամմար Քադդաֆիի դաժան սպանությունը:

Հետեւությունը պատահական չէր, այլ բխում էր խստաշունչ ձմռան վերածվող «Արաբական գարունը» պայմանավորող խռովությունները հրահրող, կազմակերպող եւ խթանող միջազգային ուժերի նկրտումներից, որոնց մեջ թերեւս գլխավորը տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության շարունակականությունն աղահովելն է:

Ակնհայտ է, որ շարունակականության աղահովման դեպքում ուժային առկա հավասարակշռությունները անփոփոխ կպահպանվեն եւ տարածաշրջանում կամրապնդվեն Արեւմուտքի դիրքերը, լինելով պաշտպանված ինքնաբուխ գարուններից, գոնե միջնաժամկետ հեռանկարում դրանք կդառնան ավելի քան անխոցելի:

Այլ կերպ, «Արաբական գարնան» պտուղները քաղելու են այն միջազգային ուժերը, որոնք հետնաբեմից խնամքով կառավարում են խռովությունները: Ինչ վերաբերում է արաբական երկրների ժողովուրդներին, ապա նրանց էլ մնում է հաշտվել պարտադրված իրողության հետ, մանավանդ որ բռնատիրական վարչակարգերն այդ երկրներում բացառել են կազմակերպված ընդդիմության ձեւավորումը, ինչի բացակայությամբ անհնար է ինքնուրույն նախաձեռնությամբ ձգտել իշխանափոխության:

«Արաբական գարունն» արաբ ժողովուրդների համար դրական որեւէ արդյունք չի տվել, ոչ էլ կտա: Պարզապես նրանք դրա հետեւանքով կարող են ընդամենը համոզվել, որ Թուրքիան, անկախ վարչապետ Էրդողանի հակաիսրայելական ելույթների անկեղծությունից, ծառայում է Արեւմուտքի քաղաքական ծրագրերին: Այլապես այդ գարունը ի զորու չէր լինի ի չիք դարձնել հարեւանների հետ առկա խնդիրները զրոյականացնելու թուրքական քաղաքականության բոլոր ձեռքբերումները:

Այդ հարեւաններից թերեւս առաջինը Սիրիան էր, որի նկատմամբ կտրուկ փոխելով դիրքորոշումը, Թուրքիան ապստամբություն է տրամադրել այսպես կոչված ազատ Սիրիայի բանակին: Ավելին, նա Արեւմուտքի առջեւ պարտավորություն է ստանձնել կազմակերպելու խռովարարներին, նույնիսկ ռազմական ուղղակի միջամտության գնով: Ահա թե ինչու օրըստօրե սրվում է լարվածությունը թուրք-սիրիական սահմանում՝ պայմանավորված Սիրիայի նկատմամբ Թուրքիայի թշնամական դիրքորոշումով: Թեեւ Իրանի հարցում թուրքական թշնամանքը բացահայտ չի հնչում, բայց եւ այնպես, իրանական կողմը զգուշացրել է, որ Մալաթիայում ՆԱՏՕ-ի հակաօդային պաշտպանական համակարգի տեղադրումից հետո Թուրքիան դառնալու է առաջնահերթ թիրախ Իրանի համար:

Վերջին շրջանում կտրուկ սրվել են նաեւ Իրաքի հետ Թուրքիայի հարաբերությունները: Դրա հիմքում էլ Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքիին չեզոքացնելու, իսկ չեզոքացման միջոցով երկրում Շիա-սուննի միջդավանական բախումներ հրահրելու ամերիկյան ծրագրերն են, որոնց Թուրքիան ինքնակամ ծառայում է: Ընդ որում՝ սա այն դեպքում, երբ միջդավանական բախումները ենթադրում են Իրաքի մասնատում, մասնատման դեպքում Հյուսիսային Իրաքի դե ֆակտո անկախ «Քուրդիստան» շրջանը, որտեղ PKK-ի հենակետերն են տեղակայված, ստանում է դե յուրե անկախություն:

Սա նշանակում է, որ Թուրքիան այլընտրանք չունի, քան ծառայելը: Ըստ երեւույթին, վարչապետ Մալիքին հենց այս հանգամանքից ելնելով է, որ հունվարի 12-ին Թուրքիային մեղադրել էր Իրաքի ներքին գործերին միջամտելու մեջ: Նա նշել է. «Վերջին շրջանում թուրքերը այնպիսի հայտարարություններ են անում, կարծես թե մենք նրանց վերահսկողության տակ ենք: Թուրքական վերջին հայտարարությունները Իրաքի ներքին գործերին միջամտություն են: Թուրքիան տարածաշրջանում աղետաբեր դերակատարություն է ստանձնել եւ պատերազմ է հրահրում: Սակայն վերջում ինքն է տուժելու, որովհետեւ բնակեցված է բազմաթիվ կրոնական եւ էթնիկ խմբավորումներով»:

Երեկ համանման մեկ այլ հայտարարություն էլ արեց Իրաքի արտգործնախարարությունը, որտեղ Թուրքիան արդեն մեղադրվում էր ռազմական միջամտության դիմելու նկրտումների համար եւ կոչ է արվում նրան հարգել Իրաքի ինքնիշխանությունն ու անկախությունը:

Խնդիրն, ինչ խոսք, Թուրքիային հասցեագրված մեղադրանքները չեն, այլ՝ բոլոր հարեւանների հետ առկա խնդիրները զրոյականացնելու դիրքորոշման ձախողումը, որի հետեւանքով նրա հարաբերությունները Սիրիայի, Իրանի եւ Իրաքի հետ ոչ միայն սրվել են, այլեւ՝ ակնհայտ է դարձել, որ այդ դիրքորոշումն իրականում Թուրքիայի ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու միջոց է եղել Արեւմուտքի համար: Այլապես, Թուրքիայի հետ անմիջական առնչություն չունեցող «Արաբական գարունը» ի զորու չէր լինի բացահայտել ավելի քան 10 տարվա վաղեմություն ունեցող այդ դիրքորոշման սնանկությունը:

ՎԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Սիրիան մերժեց Արաբական լիգայի նոր ծրագիրը

Նաեւ պայմանագիր կնքեց Մոսկվայի հետ

Սիրիայի իրադրության կարգավորմանն ուղղված միջազգային ջանքերն արդյունք չեն տալիս: Երկուշաբթի օրը Սիրիայի ղեկավարությունը կտրականապես մերժել է Արաբական լիգայի նոր նախաձեռնությունը, որը հիմնված է «եմենյան սցենարի» վրա: Նախագահ Բաշար Ասադը հայտարարել է, որ իշխանափոխության տվյալ ծրագիրը «Սիրիայի դեմ ուղղված դավադրության մի մասն է, ոտնձգություն երկրի ինքնիշխանության դեմ եւ աղաղակող միջամտություն նրա ներքին գործերին»: Ասադի խոսքերը մեջբերում է Ռոյթեր գործակալությունը:

Միաժամանակ Դամասկոսը հաջողեցրել է Մոսկվայի հետ ստորագրել 550 մլն դոլարի նոր ռազմական պայմանագիր: Սակայն փորձագետները նախազգուշացնում են, որ տվյալ դեպքում Ռուսաստանը կարող է ֆինանսապես տուժել եւ աշխարհում զգալիորեն կորցնել վարկը: Նման կորուստներ եղել էին Լիբիայի դեպքերի ժամանակ: ՌԴ Դաշնության խորհրդի միջազգային գործերի կոմիտեի նախագահ Միխայիլ Մարկելովի կարծիքով, իրավիճակը Սիրիայում փակուղային է:

Արաբական լիգայի արտգործնախարարները իրենց նոր ծրագիրը մշակել էին հունվարի 22-ին: Ծրագրով նախատեսվում է Ասադի իշխանության փոխանցում փոխնախագահ Ֆարուք աշ Շարային: Ապա երկու ամսվա ընթացքում պետք է կազմվի ազգային միասնության կառավարություն: Նոր կառավարության նպատակը պետք է լինի ժողովրդավարական քաղաքական համակարգի ստեղծումը: Վեց ամսվա ընթացքում պետք է կազմակերպվեն ժողովրդավարական եւ թափանցիկ ընտրություններ՝ արաբ եւ օտարերկրացի դիտորդների ներկայությամբ: Բացի դրանից, առաջարկվում է հիմնադիր խորհուրդ ընտրել նոր սահմանադրության մշակման համար:

Ազգային միասնական կառավարությունը պարտավոր է վերականգնել երկրի կարգուկանոնն ու անվտանգությունը, բարեփոխել անվտանգության ուժերը եւ անկախ հանձնաժողով ստեղծել քաղաքացիական բնակչության դեմ կատարված հանցագործությունների հետաքննության համար:

Արաբական լիգան մտադիր է իր նոր ծրագրի հաստատման նպատակով դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին:

Մութալիբովը «ոչ» է ասել Գուլիեւին

«Ենի Մուսավաթ»-ը, հղում անելով իրազեկ աղբյուրներին, գրում է, որ վերջերս «Քաղաքացիական նախաձեռնության ֆորում» անվամբ միավորված՝ 6 ընդդիմադիր կուսակցությունների հիմնական խնդիրն է լինելու «այլընտրանք դառնալ «Հանրային պալատին», որտեղ առանցքային են «Մուսավաթ»-ը եւ ԱԺԵ-ն»: Ընդունված հայտարարությամբ «ֆորումը» նպատակ է դրել «պայքարել հանուն ազատ եւ արդար ընտրությունների»:

Տպավորություն է ստեղծվում, թե «Մուսավաթ»-ի պաշտոնաթերթն ակնարկում է, որ «ֆորումը գրպանային ընդդիմություն է», եթե իրոք ստեղծվել է որպես «Հանրային պալատին այլընտրանք»: Այդուհանդերձ, թերթը զարգացնում է «ինտրիգը» եւ տեղեկագրում, որ «հավաստի աղբյուրների համաձայն Միացյալ Նահանգներում ապրող՝ խորհրդարանի նախկին խոսնակ Ռասուլ Գուլիեւը հեռախոսազրույց է ունեցել Մոսկվայում ապաստանած նախկին նախագահ Այազ Մութալիբովի հետ եւ խնդրել, որ Բաքվի վերջինիս համակիրները միանան ֆորումին, ինչին Մութալիբովը կտրուկ «ոչ» է պատասխանել»:

«Ենի Մուսավաթ»-ի տեղեկացվածությամբ, անցյալ տարեսկզբին Ռասուլ Գուլիեւն այցելել էր Մոսկվա եւ հանդիպում ունեցել Մութալիբովի հետ, սակայն «այսօր իրավիճակ է փոխվել»: Բանն այն է, որ իշխանություններն ի վերջո արտոնել են «Նախկին նախագահի մասին» օրենքի խորհրդարանական քննարկումներն ու նախնական քվեարկությունը, եւ «Մութալիբովի համար ցանկալի չէ խնդիրներ ունենալ, քանի որ ենթադրվում է, որ Բաքվում կկարձվի նաեւ նրա դեմ հարուցված քրեական գործը»:

Ստացվում է, որ Այազ Մութալիբովը, չցանկանալով «խնդիրներ ունենալ «ներողամտության» ճանապարհը բռնած իշխանությունների հետ», կտրկանապես մերժել է խորհրդարանի նախկին խոսնակին, որն էլ իր հերթին, եթե վստահելու լինենք «Ենի Մուսավաթ»-ին, աշխատում է գործնականություն հաղորդել «իրական ընդդիմությանն իբրեւ այլընտրանք ստեղծված ֆորումի՞ն»:

Ինչ-որ բան այն չէ: Կամ «ֆորումն» իրոք ընդդիմություն է, եւ «Մուսավաթ»-ի պաշտոնաթերթը միտումնավոր է խառնում իրավիճակը, կամ ճիշտ չէ, որ Մութալիբովն իշխանություններից ակնկալիքներ ունի:

Ըստ երեւույթին, «ֆորումն» իսկականից էլ «Հանրային պալատի» այլընտրանքն է: Բայց՝ ոչ իշխանական նախագիծ: Այդ դեպքում ստացվում է, որ իշխանական նախագիծ է «Հանրային պալատը», որը տեւական ժամանակ է՝ իրեն հռչակել է «հեղափոխական», բայց իրականում ոչինչ չի անում:

Հավանաբար զգալ են տալիս հին կաղերը: Չէ՞ որ «Հանրային պալատի» հիմնական գործիչներից ե՛ւ Իսա Ղամբարը, ե՛ւ Ալի Քերիմլին 1990-ական թվականներից համագործակցել են իշխանական կլանի հետ: Պատկերավոր ասած, նրանք «դուրս են եկել Հեյդար Ալիեւի կգբ-ական շինելից»: Պատահական չէ, որ Իսա Ղամբարը պատրաստվում է լքել «Մուսավաթ»-ի առաջնորդի պաշտոնը:

Նույն կասկածները միաժամանակ կարելի է ունենալ նաեւ Ռասուլ Գուլիեւի վերաբերյալ: Վերջինս մինչեւ ուղնուծուծը ալիեւյան «կադր» է: Քաղաքականության մեջ, իհարկե, մշտական բարեկամներ չեն լինում: Այդուհանդերձ, բացառված չէ, որ եւ «ֆորումը» եւ «Հանրային պալատը» քաղաքական նախագծեր են, որոնք Ադրբեջանի ներքաղաքական կյանքում ստեղծում են ժողովրդավարության տարրերի առկայության պատրանք, բայց երկուսն էլ՝ կառավարվում նույն կենտրոնից կամ, միմյանցից անկախ, անում նույն սեւ գործը: Այն է՝ բռնավարում ընդդիմադիր դաշտը, որպեսզի ներքաղաքական պայթյուն չլինի:

Մութալիբովի կտրուկ «ոչ»-ը գուցե պետք է հասկանալ խեղկատակ դառնալու ցանկության բացակայությա՞մբ: Ի վերջո, թվարկվածների շարքում նա ամենալուրջ քաղաքական ֆիգուրն է:

Վ. Ա.

ԴԱՄԱՍԿՈՍ

Խորվաթիան ԵՄ անդամ կդառնա 2013-ի հուլիսին

Խորվաթիան 2013-ին կդառնա Եվրոմիության 28-րդ լիիրավ անդամը: Այս կապակցությամբ անցկացված հանրաքվեի արդյունքները վկայում են, որ քվեարկության մասնակիցների 66,24 տոկոսը կողմ է երկրի ԵՄ անդամ դառնալուն:

Երկրի Պետական ընտրական հանձնաժողովին վկայակոչելով՝ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ անդամակցությանը դեմ է արտահայտվել հանրաքվեի մասնակիցների 33,17 տոկոսը:

Խորվաթիայում գրանցված 4,5 մլն ընտրողներից քվեարկությանը մասնակցել է 1,91 միլիոնը կամ 43,55 տոկոսը: Հանրաքվեի անցկացմանը հետեւում էին 1800 դիտորդներ:

Հանրաքվեի հաջողության համար անհրաժեշտ էր, որ անդամակցության օգտին արտահայտվեր քվեարկության մասնակիցների առնվազն 50 տոկոսը:

Այսպիսով, Խորվաթիան 2013-ի հուլիսի 1-ից կդառնա ԵՄ լիիրավ անդամ: Երկրի նախագահ Իվո Յոսիպովիչը հանրաքվեի արդյունքներն անվանել է «մեծ իրադարձություն» եւ շնորհավորել Խորվաթիայի բոլոր բնակիչներին:

Հանուն գրպանի շահի՝ պղծում են մշակութային օջախները

Շատ ծանր է, երբ օտարները պղծում, քանդում, ավերում կամ էլ մեր ազգային հարստության սրբավայրերը, մշակույթի օջախները վեր են ածում այլ նպատակների օգտագործման վայրերի: Սակայն ավելի ծանր է, երբ մեր բոլորի աչքի առաջ, հենց մայրաքաղաքի ուրում նմանատիպ քայլի փորձ է արվում մերոնց կողմից: Ասածս հիմնավորեմ: Անցած դարի սկզբին, Հանրապետության հրապարակի հարեւանությամբ (Արամի, Բուզանդի, Աբովյան փողոցների միջնամասում) գործում էր Երեւանի արական գիմնազիան: Այնուհետեւ այդ երկհարկանի շենքում երկար տարիներ գործում էին ու փորձեր էին անում «Հայաստանի պարի պետական անսամբլը», «Տկզար» ժող. գործիքների եւ էլի մի քանի համույթներ: Այնուհետեւ այդ համույթներին նոր տարածքներ տրամադրվեցին, որոշներն էլ փակվեցին: Իսկ շենքը վերանորոգվեց ու անվանակոչվեց մեր մեծ կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի անվան փոքր համերգասրահ: Մեկ տարի առաջ Արամ Խաչատրյանի անվան մեծ համերգասրահը եւ Առնո Բաբաջանյանի անվան փոքր համերգասրահը միավորվեցին մեկ կառույցում՝ մշակույթի նախարարության ենթակայությամբ:

Այս մանրամասները նշում եմ, որպեսզի ընթերցողներին պարզ դառնա, որ մայրաքաղաքում այս երկու կարեւոր համերգասրահները մշակութային սրբավայրեր են, որտեղ աշխատել, ելույթներ են ունեցել մեր մշակույթի մեծերը՝ տարբեր ժամանակներում: Իսկ այժմ, չգիտես թե ում թեթեւ ձեռքով ու թույլտվությամբ, շուտով Առնո Բաբաջանյան փոքր համերգասրահի նկուղում կբացվի գիշերային ակումբ, պորտաղարով, կարաոկեյի սրահով, առավելաբար իրանցի հաճախորդների համար:

«**Ազգը**» տեղեկությունն ստանալուն պես շտապեց տեղում ճշտել իսկությունը: Երկար ժամանակ որեւէ պատասխանատու անձ չհայտնվեց, եւ միայն աշխատող բանվորները հաստատեցին, որ առայժմ ընթանում է վերանորոգման աշխատանք եւ նկուղում կբացվի կարաոկե: Պարզվեց նաեւ, որ այդ օբյեկտի տերերը երկու հայ երիտասարդներ են, որոնք արդեն իսկ Երեւանում բացել են իրանական ռեստորան: Բնական էր, որ այդ երիտասարդները ոչ մի կերպ չեն ցանկանում բացահայտվել: Բայց փաստը մնում է փաստ, որ եւս մեկ մշակութային օջախի շենք ծառայեցվելու է ոչ նպատակային: Իսկ թե ո՞վ է այդ կործանարար քայլի ջատագովը՝ առայժմ հայտնի չէ: Միայն հստակ է, որ արդեն ե՛ւ Երեւանում, ե՛ւ Պարսկաստանում ամենուր բաժանվում են բուկլետներ եւ արագ ընթանում է այդ օբյեկտի բացման մասին գովազդը: Համոզվելու համար խնդրում ենք ուշադիր նայել գովազդային բուկլետին, որտեղ կա նաեւ քարտեզը: Մի՞թե ուրիշ վայր ամբողջ մայրաքաղաքում չի գտնվել ու հիմա էլ հերթը հասել է Առնո Բաբաջանյան համերգասրահին:

Հուսանք, որ այս անբարո քայլը վայրկյան առաջ կկասեցվի եւ այդ տարածքները կտրամադրվեն մշակութային դաշտում իրենց ուրույն տեղը գրաված համույթների, որոնցից շատերը փորձասենյակներ չունեն, այլ ոչ թե մի քանիսին... որոնք իրենց գրպանի շահը գերադասում են ազգային արժեքներից:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Զահրատի «Ակնթարթի մը չափ» ժողովածուն՝ պարսկերեն

Թեհրանում լույս է տեսել պոլսահայ նշանավոր բանաստեղծ Զահրատի ստեղծագործությունների հատընտիրը՝ «Ակնթարթի մը չափ» վերնագրով, պարսկերեն թարգմանությամբ, որն իրականացրել է իրանահայ բանաստեղծ, արձակագիր եւ թարգմանիչ Խաչիկ Խաչերը: Հատորն ընդգրկում է 119 բանաստեղծությունների թարգմանություն՝ զուգադիր հայերեն բնագրերով: Հրատարակիչ՝ «Էբթեքարէ նո» (332 էջ, 1000 օրինակ):

Ժողովածուն բացվում է Խաչիկ Խաչերի ներածական խոսքով, որին հետեւում է բանասիրական գիտությունների դոկտոր Սուրեն Դանիելյանի առաջաբանը («Զահրատի բանաստեղծութեան անմիջականութեան բաց պատուհանները»): Նախքան հրատարակվելը, թարգմանությունն արժանացել է Իրանի ամենանշանավոր գրական ամսագրի՝ «Գոհարանի» հավանությանը. այս մասին տեղեկանում ենք «Ալիֆ» օրաթերթից

Խ. Խաչերից մինչ այժմ հրատարակվել են հեղինակային եւ թարգմանական (հայերեն եւ պարսկերեն լեզուներով) 16 հատորներ, որոնցից «Իմ ճակատագրի ծովը» ժողովածուն՝ տպագրված Բեյրութում, նա արժանացել է «Գէորգ Մելիտինեցի» գրական մրցանակին: Հայաստանում տպագրվել է 2 անգամ՝ ՀԳՄ մատենաշարում՝ «55+1 պարսկական ժողովրդական հեքիաթներ» շարքից էջեր եւ «Մեսախի ճամփան» ժողովածուում: Առաջիկայում նախատեսվում է Խաչիկ Խաչերի թարգմանությամբ «20-րդ դարի գերմանական պատմվածքը» վերնագրով անթոլոգիայի հրատարակություն («Հայաստան» հրատ.):

Թեհրանում լույս տեսած Զահրատի հատընտիրը Խ. Խաչերի թարգմանական առաջին գործն է առանձին գրքով, հայ բանաստեղծության բնագավառում:

Մ. Ք.

Անկախությունը պատանիների պատկերմամբ

Հովհաննես Թումանյանի տունթանգարանում բացվեց «Մենք անկախության սերունդն ենք» գեղանկարի մանկապատանեկան ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանի անկախության 20-ամյակին: Ցուցահանդեսին մասնակցում են հանրապետության 19 գեղարվեստի եւ արվեստի դպրոցների 5-15 տարեկան թվով 120 աշակերտներ: ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հովանավորությամբ եւ մշակույթի նախարարության ու Արարատյան հայրապետական թեմի աջակցությամբ ցուցահանդեսին նվիրված նկարներով լույս է տեսել ծավալուն գիրք-ալբոմ «Մենք անկախության սերունդն ենք» վերնագրով: Ալբոմում տեղ են գտել նաեւ կազմակերպիչների ուղերձներն՝ ուղղված անկախության սերնդին:

Ցուցահանդեսի բացման ընթացքում շնորհակալագրեր ու մեդալներ հանձնվեցին մի քանի մարզերի արվեստի դպրոցներին ու նրանց սաներին: Իսկ 120 պատանի նկարիչներ որպես նվեր ստացան գիրք-ալբոմ: «Ազգը» զրուցեց Զեյթուն համայնքի գեղարվեստի դպրոցի սան, 14 տարեկան Արթուր Շահվերդյանի հետ: Ի՞նչ է անկախությունը հարցին վերջինս ասաց. «Ինձ թվում է անկախությունը բոլոր պետությունների երեխաների երազանքն է եւ ես շատ ուրախ եմ ու երջանիկ, որ համարվում եմ անկախության սերնդի ներկայացուցիչ: Իմ հեքիաթում ես անկախության գիծն եմ հիմք հանդիսացրել»:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանը, հոգեւոր դասը, բազմաթիվ հյուրեր: «Ազգը» սրբազանին հարցրեց, թե ի՞նչ տպավորություն ստացավ ցուցահանդեսից. «Երեխաների նկարներում խորհրդանշական պատկերներ տեսա, որոնք հրաշալի վերլուծական ու տեսողական պատկերներով են պատկերված, դրանցում արտացոլված է նաեւ նրանց հոգեւոր մտահորիզոնը»:

Մ. Մ.

ԼՈՒՐԵՐ ՆՅՈՒ ՅՈՐՔԻՑ

Երիտասարդական «Յոյսեր» խումբը՝ միայն սփիւռքահայ երգիչներով

Նոր տարին, նիւեորքահայ մշակութային կեանքին համար սկսաւ դրական ելոյթով մը: Նոր կազմուած «Յոյսեր» երաժշտական համոյթը, որ կը վայելէ Նիւ Եորքի հարիւրամեայ Ս. Գրիգոր եկեղեցւոյ հովանաւորութիւնը, նոր էջ մը բացաւ երաժշտասէր հասարակութեան համար:

Վերջին քսան տարիներուն հայ բեմերէն ժողովրդային երգն ու նուագը կը լսուէին միայն հայրենի մեր երգիչներու կատարումներով, կարծէք սփիւռքը չունէր տալիք այլեւս: 60-70-ական թուականներու փայլող աստղերը՝ Գաթրճեան, Աշիս, Մանուէլ... դժբախտաբար յաջորդող տարիները չունեցան իրենք իրենց պարտադրող նոր անուններ եւ հրապարակը մնաց հայատանցիներուն: Այլեւս սփիւռքահայ բեմը յագեցած էր ամբողջ 30 տարիներ լսելով հայրենի, տաղանդաւոր թէ անտաղանդ երգիչներ: Մինչդեռ «Յոյսեր» համոյթը կու գայ այդ բացը գոցելու եւ նոր դուռ մը բանալու սփիւռքահայ մեր երգարուեստէն ներս:

Եւ այս՝ շնորհիւ համոյթին գեղարուեստական ղեկավարին՝ Յարութ Պասմաճեանին, որ լեցուց բեմը այդ երեկոյ իր նուագով, երգով, ասմունքով ու պարով:

Յունուար 14-ին, Նիւ Եորքի «Ֆլորընս Գուլդ» համերգասրահը ամբողջութեամբ լեցուած էր, այդ երեկոյ հաւաքուածները կու գային տարբեր կազմակերպութիւններէ, միութիւններէ, եկեղեցիներէ եւ հասանքներէ: Ներդաշնակ փունջ մը հայորդիներու, որոնք եկած էին քաջալերելու իրենց հարազատ, սփիւռք ծնած տաղանդաւոր տղան ու աղջիկները:

«Մենք ենք մեր սարերը» ամբողջութեամբ տոհմիկ եւ ժողովրդական հայկական յայտագիր մըն է, որ պարգեւեցին «Յոյսերը», եւ յայտագիրն ալ սկսաւ Մանէ Յակոբեանի այդ նոյն երգով: Յայտագրին մաս կը կազմէր 17-ամեայ շնորհալի եւ բնատուր ձիրքերով օժտուած Անի Ճիրճիրեանը, որ յայտագրի բովանդակ տեւողութեան հանդիսատեսին ուշադրութիւնը իր վրայ սեւեռած պահեց իր երգով: Անին ծնած է Նիւ Եորք:

Շնորհալի է նաեւ Մարիա Պարսումեանը իր անուշ ձայնով: Անոր մասնակցութիւնը, բացի խմբային երգերէ, եղաւ Վաչէ Աւէեանի «Հայ ենք մենք», ժողովրդային «Երգենք հայերէն» եւ «Ինչու ես քեզ սիրեցի» եւ Ռիչըրտ Մասլենյանի «Երկինք մի՛ լաց» երգերը: Մարիան ծնած է Հալէպ:

Իսկ երրորդ երգչուհին էր Ալին Այտինեանը: Թէեւ փոքր ձայն մը, սակայն իր տեսակին մէջ իւրայատուկ եւ քնքուշ: Ալինը ծնած է Երուսաղէմ:

Կարինէ Պարսումեան, որ երաժշտական, որ երաժշտական ղեկավարնէ համոյթին, սացած է իր երաժշտական ուսումը Երեւանի Առնօ Բաբաջանեանի անուան երաժշտական դպրոցը եւ որպէս վիրաբոյժ աւարտած է Երեւանի բժշկական համալսարանը: Նիւ Եորքի մէջ ան կը մասնակցի ազգային-կրթական կեանքին որպէս ուսուցչուհի: Յայտագիրը դրուած էր Կարինէին անմիջական խնամքին տակ: Շատ հետաքրքրական էր անոր ելոյթը Խաչատուր Աւետիսեանի «Տաղ յայտնութեան» երգով, որուն մասն կազմեցին մանուկներ: Թատերականացուած եւ զգայուն խաղարկութեամբ ելոյթ մը անկասկած: Կարինէն ծնած է Հալէպ:

Կարգ մը երգերու հետ կը ցուցադրուէին շարժապատկերներ՝ տալով երգին խորհուրդը ընդհանրապէս:

Խմբային երգերը մեր ծանօթ հայրենասիրական երգերն էին. Էտկար Յովհաննէսեանի «Երեւան-Էրեբունի», Ռոպերթ Ամիրխանեանի «Երկիր հայրենի», Նահապետ Ռուսինեանի «Կիլիկիա» եւ այլ երգեր, որոնց կը բերէր մասնակցութիւնը ներկայ հանդիսատեսը:

Յարութ Պարսումեան նաեւ ունի երաժշտական յօրինումներ: Դաշնամուրի վրայ ի՛նք նուագեց: Նաեւ կիթառով մասնակցութիւն ունեցաւ յայտագրին: Ըսենք մինչ այդ որ Յարութ ունի բնատուր թատերական տաղանդ նաեւ ու մաս կը կազմէ ԹՄՄ «Միեր Մկրտչեան» թատերախումբին: Յարութ ծնած է Հալէպ:

Երեք տարբեր առիթներով յայտագրին մասնակցութիւն բերաւ ՀԲԸՄ-ի «Անդրանիկ» պարախումբը, որուն մաս կը կազմէ Յարութը: Ալինա Ռանկպարան ջութակով բերաւ իր մասնակցութիւնը: Ան Նիւ Եորքի «Ֆիլիրդ» ֆոլեջի ուսանողուհի է:

Գնահատանքի խօսք կ'երթայ եկեղեցւոյ հովիւին՝ Մեսրոպ քհնյ. Լազիսեանին: Ան վստահեցուց, որ «Յոյսեր» մկրտուած երիտասարդական այս խմբակը պիտի արժեցնէ իր անունը դառնալու յոյսը վաղուան՝ ապահովելով հայ երգի ու երաժշտութեան շարունակականութիւնը:

«Յոյսեր» խումբը պիտի չմնայ մեր քաղաքի սահմաններէն ներս, վստահաբար ան իր ելոյթներով նոր յոյս պիտի ներշնչէ, եւ ինչու չէ՝ օրինակ հանդիսանայ Ամերիկայի միւս համայնքներուն համար:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ

Հայ արվեստագետների ցուցահանդեսը բացվեց Վիեննայում

Օրեր առաջ Վիեննայի «Kultur Kontakt Austria» կենտրոնի ցուցահանդեսային համալիրում բացվել է հայ արվեստագետներ Կարինե Մացակյանի, Միհր Ազարյանի եւ Կարեն Ալեքյանի նկարների ցուցահանդեսը: «Երկիմաստ սահմաններ» խորագիրը կրող ցուցահանդեսի բացման արարողությանը ելույթով հանդես է եկել ՀՀ դեսպան Արման Կիրակոսյանը: Հյուրերի թվում են եղել Ավստրիայի արտաքին գերատեսչության ներկայացուցիչներ, արվեստագետներ, հայ համայնքի ներկայացուցիչներ: Ավստրիայի կրթության, արվեստի եւ մշակույթի դաշնային նախարարության եւ «Kultur Kontakt Austria» կենտրոնի աջակցությամբ բացված ցուցահանդեսը բաց կլինի մինչեւ փետրվարի 24-ը:

Հուշ-երեկո Հակոբ Պարոնյանի մահվան 120-րդ տարելիցի առիթով

Ինչպես «**Ազգ**»-ին տեղեկացնում են Սիրիայից, հունվարի 28-ին Դամասկոսի առաջնորդարանի դահլիճում կկայանա գեղարվեստական երեկո նվիրված մեր մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանի մահվան 120-րդ տարելիցին:

Ծրագրում ընդգրկված են երգիծական ներկայացում, կենդանի պատկեր, թատերգություն: Հուշ-երեկոն անցկացվում է Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Արմաշ Ս. եպս. Նալբանդյանի եւ կազմակերպությամբ առաջնորդարանի մշակութային հանձնախմբի:

Պետրոսյանն ու Կուրսովան արժանացան չեմպիոնի տիտղոսին

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը վերջնագիծը հատեցին Հայաստանի տղամարդկանց 72-րդ եւ կանանց 67-րդ առաջնությունները: Բավականին սուր մրցակցությունում անցած մրցաշարերի ավարտական տուրն անվանեց չեմպիոններին: Ուժեղագույնի տիտղոսին արժանացան գրոսմայստերներ Տիգրան Պետրոսյանն ու Մարիա Կուրսովան:

Չեմպիոնի տիտղոսի համար ավելի թեժ էր մրցակցությունը տղամարդկանց մրցաշարում: Չեմպիոնը որոշվեց 11-րդ տուրում, Տիգրան Պետրոսյանի եւ Ռոբերտ Հովհաննիսյանի մրցավեճում: Նախորդ տուրում անցյալ տարվա ՀՀ չեմպիոն Ռոբերտ Հովհաննիսյանը հաղթել էր Զավեն Անդրեասյանին, որն առաջին պարտությունն էր կրել: Իսկ Պետրոսյանը ոչ-ոքի էր ավարտել պարտիան Սամվել Տեր-Սահակյանի հետ: Այսպիսով, ավարտական տուրից առաջ Հովհաննիսյանը 6 միավորով գլխավորում էր աղյուսակը, իսկ Պետրոսյանը նրան զիջում էր կես միավորով:

Այնպես որ ավարտական տուրում չեմպիոնի տիտղոսը պահպանելու համար Ռոբերտ Հովհաննիսյանին ձեռնտու էր նույնիսկ ոչ-ոքին: Պարտիայի ընթացքում թվում էր, թե սեւերով խաղացող Ռոբերտին կհաջողվի կես միավոր վաստակել: Սակայն ավելի փորձառու Տիգրան Պետրոսյանին հաջողվեց շահել այդ անչափ կարեւոր պարտիան ու 7 միավորով հռչակվել Հայաստանի չեմպիոն: Բացի ոսկե մեդալից ու դրամական պարգեւից, Պետրոսյանը նաեւ ընդգրկվեց Հայաստանի ազգային հավաքականում, որը մասնակցելու է շախմատի համաշխարհային օլիմպիադային: Իսկ 6,5 միավորով 2-րդ հորիզոնականը զբաղեցրած Ռոբերտ Հովհաննիսյանը ոչ միայն զրկվեց չեմպիոնի իր տիտղոսից, այլեւ կորցրեց տեղը Հայաստանի հավաքականում:

Համառ պայքար է ծավալվել նաեւ բրոնզե մեդալի համար: Ի վերջո 6 միավորով 3-րդ տեղը գրավեց Սամվել Տեր-Սահակյանը, որն ավարտական տուրում հաղթեց Լեւոն Բաբուջյանին:

5,5-ական միավորով 4-5-րդ տեղերը բաժանեցին Զավեն Անդրեասյանն ու Արման Փաշիկյանը: Հաջորդ տեղերում են Հրանտ Մելքումյանը՝ 5 միավոր, Կարեն Գրիգորյանը՝ 4,5, Արաշես Մինասյանը, Ավետիք Գրիգորյանը՝ 4-ական, Հայր Սիմոնյանն ու Լեւոն Բաբուջյանը՝ 3,5-ական:

Կանանց մրցաշարում չեմպիոնուհու տիտղոսի համար պայքարն ընթացավ Հայաստանի առաջնությունում նորամուծը նշող Մարիա Կուրսովայի եւ Աննա Հայրապետյանի միջեւ: 10-րդ տուրում էլ Կուրսովան հաջող խաղաց՝ հաղթելով Լիա Մարտիրոսյանին: Իր օգտին մեկ միավոր գրանցեց նաեւ Աննա Հայրապետյանը, սակայն առանց խաղատախտակի մոտ նստելու: Նրա մրցակցուհի Մարիա Գեւորգյանը դեռեւս նախորդ տուրում էր դուրս մնացել մրցաշարից:

Ավարտական տուրից առաջ Մարիա Կուրսովան կես միավորով գերազանցում էր իր հիմնական մրցակցին: Նա շարունակեց հաղթարշավը՝ հերթական հաղթանակը տոնելով Հասմիկ Ղամբարյանի հետ մրցավեճում: Այսպիսով, 10 հնարավորից վաստակելով 9 միավոր, չկրելով ոչ մի պարտություն, Մարիա Կուրսովան, որ գրոսմայստեր Արման Փաշիկյանի կինն է, առաջին իսկ փորձից նվաճեց Հայաստանի չեմպիոնուհու տիտղոսը: Կուրսովան արդեն հանդես է եկել Հայաստանի կանանց հավաքականի կազմում, այնպես որ 5-րդ թափուր տեղը կզբաղեցնի 8,5 միավորով 2-րդ հորիզոնականը գրաված Աննա Հայրապետյանը, որը հաղթեց Լիանա Աղաբեկյանին:

Երկու մրցանակակիրների առավելությունը մրցաշարի մյուս մասնակիցների նկատմամբ զգալի էր: Ուստի պատահական չէ, որ 3-րդ տեղը գրաված Եվգենիա Դոլուխանովան Հայրապետյանից հետ մնաց 2 միավորով: Նա հաղթանակով ավարտեց ավարտական 2 պարտիաները Լիանա Աղաբեկյանի եւ Նաիրա Մովսիսյանի հետ: Դոլուխանովան էլ նորամուծը հաջող նշեց ՀՀ առաջնությունում: Նա այս տարվանից է ներկայացնում Հայաստանը: Մինչ այդ Դոլուխանովան ներկայացնում էր Ուկրաինան:

Մյուս մասնակիցների ցուցանիշներն այսպիսին են. Շուշան Սարգսյան՝ 6 միավոր, Լիանա Աղաբեկյան, Նարինե Գասպարյան՝ 5,5-ական, Անահիտ Խառատյան՝ 5, Լիա Մարտիրոսյան՝ 4, Նաիրա Մովսիսյան՝ 2,5, Հասմիկ Ղամբարյան՝ 1,5, Մարիա Գեւորգյան՝ 1:

Հայ լեռնագնացները կմասնակցեն Դեմավենդի վերելքին

Ինչպես տեղեկացավ ալպինիզմի եւ լեռնային տուրիզմի Հայաստանի ֆեդերացիայից, այսօր ֆեդերացիայի ուժեղագույն թիմը մեկնում է Իրան՝ մասնակցելու միջազգային հեղինակավոր մրցաշարի, որի ժամանակ պետք է փորձ արվի նվաճել երկրի ամենաբարձր լեռան՝ Դեմավենդի (5671 մ) գագաթը: Հայաստանի թիմի կազմում վերելքին կմասնակցեն Անտուան Անանյանը, Գարեգին Ունասյանը, Լեւոն Մովսիսյանն ու Հովհաննես Մարտիրոսյանը: Մրցաշարին կմասնակցեն շուրջ 25 երկրների 200 լեռնագնացներ:

Իրանի մրցաշարին մասնակցելու իրավունքը հայ լեռնագնացները նվաճել են անցյալ տարի կատարած մի շարք հաջող վերելքների շնորհիվ: Նշենք, որ վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանը թիմային ոչ մի մրցաշարի չէր մասնակցել: Այս առումով Իրանի մրցաշարի մասնակցությունն ավելի է արժեւորվում:

Թադեւոսյանն ու Բեգլարյանն էլ հեռացան «Միկայից»

Նոր մրցաշրջանից առաջ «Միկայում» շարունակվում են կորուստները: Եվս 2 ֆուտբոլիստ՝ Ալեքսանդր Թադեւոսյանն ու Նարեկ Բեգլարյանը հեռացան թիմից: Թադեւոսյանը հաջող փորձաշրջան անցավ Լիբանանի «Ալ Ահեդ» թիմում եւ 6 ամսով պայմանագիր կնքեց ակումբի հետ: Հաջող հանդես գալու դեպքում ամռանը Թադեւոսյանի հետ պայմանագիրը կարող է երկարաձգվել 2 տարով:

Նարեկ Բեգլարյանն էլ վերջապես լուծեց վիզայի հարցը եւ շուտով կմիանա Սլովակիայի «Տատրանին», որի հետ 6 ամսով պայմանագիր է կնքել: Նա մինչեւ ամառ «Տատրանում» հանդես կգա վարձավճարով: Եթե թիմին հաջողվի պահպանել տեղը բարձրագույն խմբում, ապա Նարեկը հավանաբար 2 տարվա պայմանագիր կնքի «Տատրանի» հետ:

1 մլն դոլար հաղթանակի համար

Հասարակածային Գվինեայում մեկնարկել է ֆուտբոլի Աֆրիկայի գավաթի հերթական խաղարկությունը: Մասնակից 16 հավաքականները բաժանվել են 4 խմբի: Ա խմբում հանդես եկող տանտերերը հաղթանակով սկսեցին մրցաշարը՝ 1-0 հաշվով պարտության մատնելով Լիբիայի ընտրանուն: Դա իրոք պատմական հաղթանակ էր տանտերերի համար, որոնք նորամուտն էին նշում Աֆրիկայի գավաթի մրցաշարերում: Հետաքրքրական է, որ մեկնարկից առաջ երկրի գլխավոր մարզիչ Թեոդորո Նգուեմա հավաքականի ֆուտբոլիստներին 1 մլն դոլար պարգեւավճար էր խոստացել մեկնարկային խաղում հաղթելու համար: Իսկ յուրաքանչյուր խփած գոլի համար նա 20 հազար դոլար էր խոստացել:

Եվս մեկ անակնկալ մատուցեց Զամբիայի հավաքականը՝ 2-1 հաշվով հաղթելով Սենեգալի ընտրանուն, որը Ա խմբում հաղթողի գլխավոր հավակնորդ է համարվում:

Բ խմբում Կոտ դ՚Իվուարի ընտրանին մեկնարկեց հաղթանակով՝ 1-0 հաշվով պարտության մատնելով սուդանցիներին: Իսկ Անգոլայի ֆուտբոլիստներն առավելության հասան Բուրկինա Ֆասոյի հավաքականի նկատմամբ (2-1):

Մրցաշարում կրկին երկիրխանություն հաստատվեց

Վեյք Ան Զեեի շախմատի մրցաշարի 7-րդ եւ 8-րդ տուրերում Լեւոն Արոնյանը հաշտություն կնքեց Վասիլի Իվանչուկի եւ Վեսելին Թոփալովի հետ: Իսկ մրցաշարում նրա գլխավոր մրցակից Մագնուս Կառլսենը նախ հաղթեց Բորիս Գելֆանդին, ապա ոչ-ոքի խաղաց Թեյմուր Ռաջաբովի հետ: Այնպես որ մրցաշարում կրկին երկիրխանություն հաստատվեց: 5,5-ական միավորով առաջատարներն են Լեւոն Արոնյանն ու Մագնուս Կառլսենը: 5 միավորով նրանց հետապնդում է Ռաջաբովը, որը 7-րդ տուրում հաշտություն կնքեց Հիկարու Նակամուրայի հետ:

4,5-ական միավոր ունեն Ֆաբիանո Կարուանան, Վասիլի Իվանչուկն ու Հիկարու Նակամուրան: Կարուանան միավորը բաժանեց Վուղար Հաշիմովի եւ Վասիլի Իվանչուկի հետ մրցավեճում:

Երեկ մրցաշարում հանգստյան օր էր, իսկ այսօր մասնակիցները կանցկացնեն 9-րդ տուրի մրցախաղերը: Արոնյանը սպիտակներով կխաղա Կարուանայի հետ: Կառլսենի մրցակիցը կլինի Սերգեյ Կարյակինը, որն ունի 3,5 միավոր:

C խմբի մրցաշարում էլինա Դանիելյանին ոչ մի կերպ չի հաջողվում հաղթանակ տոնել: Վերջին 2 պարտիաներում հայ շախմատիստուհին հաշտություն կնքեց Մեթյու Սադլերի եւ Սաչդեւ Տանիայի հետ: 8 տուրից հետո Դանիելյանը 2,5 միավորով 12-րդ տեղում է: 6,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Մախիմ Տուրովն ու Հանս Տիկանենը:

Նախապատրաստվում են, փորձարկում ուժերը

Ֆուտբոլային նոր մրցաշրջանին նախապատրաստվող հայկական ակումբները մարզումներին զուգահեռ նաեւ ստուգողական հանդիպումներում փորձարկում են ֆուտբոլիստների խաղային ունակությունները:

Սոչիում ուսումնամարզական հավաք անցկացնող Դիլիջանի «Իմպուլսը» ստուգողական առաջին խաղում 0-2 հաշվով զիջեց Ստավրոպոլի «Դինամոյին», որը հանդես է գալիս ՌԴ 2-րդ խմբի առաջնությունում: «Իմպուլսի» կազմում հանդիպումը մասնակցեցին թիմի նորեկներ Կոնստանտին Մանդրիչենկոն, Ֆիլիպ Տիմովը, Դավիթ Բաբայանն ու Հայկ Իշխանյանը: Հաջորդ հանդիպումն «Իմպուլսը» կանցկացնի հունվարի 25-ին Տոմսկի համանուն թիմի հետ, որը հանդես է գալիս ՌԴ պրեմիեր լիգայում:

Նորաստեղծ «Քինգ Դելյուքսը» 2-րդ խաղն էլ հաղթանակով ավարտեց: Այս անգամ աբովյանցիները 5-3 հաշվով առավելության հասան «Իմպուլս-2-ի» նկատմամբ: Աբովյանցիների կազմում հեթ տրիկի հեղինակ դարձավ Արա Հովհաննիսյանը, որի խփած միակ գոլի շնորհիվ նախորդ խաղում «Քինգ Դելյուքսը» հաղթել էր «Ուլիսին»: Մեկական գնդակ էլ խփեցին Արամ Հովսեփյանն ու Անդրանիկ Կարապետյանը: «Իմպուլս-2-ում» էլ հեթ տրիկի հեղինակ դարձավ Գոռ Սարգսյանը: Հունվարի 26-ին աբովյանցիները կմրցեն «Բանանց-2-ի» հետ:

«Փյունիկն» էլ ուժերը փորձեց իր դուստր թիմի՝ «Փյունիկ-2-ի» հետ: Գրանցվեց ոչ-ոքի՝ 2-2: «Փյունիկից» գոլերի հեղինակներ դարձան Արսակ Եդիգարյանն ու Այվազյանը, մրցակցից աչքի ընկան Հակոբյանն ու Քիթոյանը:

Ոչ-ոքի արդյունք գրանցվեց նաեւ «Շիրակի» եւ «Բանանցի» մրցավեճում: Մրցակիցները մեկական գնդակ փոխանակեցին: «Շիրակից» գոլի հեղինակ դարձավ թիմում փորձաշրջան անցնող ֆրանսիացի Ժան Լուի Բերնը, իսկ «Բանանցի» կազմում աչքի ընկավ Էդուարդո դոս Սանթոսը:

Բացի Ժան Լուի Բերնից, «Շիրակում» փորձաշրջան է անցնում նաեւ Ֆաբրիս Գեղամ Գուզելը: Բերնը հարձակողական ոճի կիսապաշտպան է, Ֆրանսիայի բազմակի չեմպիոն «Լիոնի» մարզադպրոցի սան: Գուզելը նույնպես նույն մարզադպրոցի սան է, արմատներով հայ է, Արազ Օզբիլիսի հորաքրոջ որդին է: Երկու ֆուտբոլիստներն էլ ներկայումս հանդես են գալիս ֆրանսիական ցածր խմբում ելույթ ունեցող ՍԳԱ թիմում, որի նախագահը հանրահայտ ֆուտբոլիստ, աշխարհի չեմպիոն Յուրի Ջորկաեֆն է: Հիշեցնենք, որ անցյալ տարի «Շիրակ» ակումբի եւ Ջորկաեֆների ընտանիքի միջեւ համագործակցության պայմանագիր էր կնքվել:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքով**

Կանխիկով երթեւեկը՝ կոռուպցիայի նախապայման

Մայրաքաղաքային ուղեւորաշրջանային տրանսպորտի աշխատանքը բարելավելու, բարեփոխումներ հայտարարելու վերաբերյալ պաշտոնյաների ելույթները երեւանցիները վերջին տարիներին մշտապես են ունկնդրում: Վերացվեց տրամվայների ցանցը, տրոլեյբուսների անարդյունավետությունից խոսողները նույն ճակատագիրն են նախատեսում այս ոլորտի համար, պարբերաբար է նշվում քաղաքապետարանի ենթակայության ու մասնավորի կողմից շահագործվող երթուղիներում ուղեվարձը բարձրացնելու մասին: Փոքր տարողության մեքենաները առավել ընդարձակ ավտոմեքենաներով փոխարինելը ներկայացվում է իրավիճակը կարգավորելու իրական միջոց, չնկատելու տալով, որ այսօր իսկ շահագործվող ավտոբուսները չեն բավարարում պահանջները, չխոսելով դրանց վառելիքից օդային ավազանի աղտոտման մասին:

Այս առումով թերահավատություն արտահայտեցի, երբ վերջին տարիներին Ֆրանսիայի Լիոն քաղաք տեղափոխված ծանոթս ասաց, որ անցած մի քանի տարում իրենց թաղամասը քաղաքի կենտրոնական հատվածների հետ կապող տրամվայի 2 երթուղիներ են շահագործվել: Սա մի երկրում, որտեղ էլեկտրաէներգիայի արտադրության 75 տոկոսը ատոմակայաններում է իրականացվում, երբ մենք հիդրոկայաններ ենք կառուցում եւ խոսում էլ. էներգիայի ավելցուկը արտահանելու մասին:

Այսքանով հանդերձ հանրությունը երբեւէ չի լսում իրական բարեփոխումների մասին, երբ արժանապատիվ սպասարկում կտիրի, գրաֆիկները չեն խախտվի, վարորդները հարգալից կդառնան, մի խոսքով՝ վիճակ, որն ընդունված է եվրոպական համարել, քանզի մասամբ արդեն այս ավանդույթներն ունեցողների մասն ենք: Մասամբ եմ ասում, երբ կարող ենք մի քանի պարզ գործընթացներով հիմնական մաս կազմել, դրանից բխող բոլոր դրական հետեւանքներով: Ասենք. Եվրոպայի մաս կազմող Ավստրիայի 2-րդ, 300 հազար բնակիչ ունեցող Գրաց քաղաքի ընդհանուր նշանակության ավտոբուսների ու տրամվայների 10 ուղեւորից 8-9 պարզապես բարձրանում ու տեղավորվում են հարմարավետ նստարաններին: 1-2-ը մոտենում են պրոֆեսորի կամ մոդելուհու տեսքով վարորդին եւ տոմս գնում: Այն 8-9 անտոմս ուղեւորներ չեն, այլ երթեւեկում են նախօրոք գնված մշտականներով: Պատկերացնենք մի վիճակ, երբ միլիոնանոց մեր քաղաքը սպասարկող «Երեւանտրանս»-ի 50 հազար ուղեւորները ձեռք են բերում 3 հազար դրամի փոխարեն 2 հազար դրամի նպաստավոր մշտական: Բացի նրանից, որ կանխվում է վարորդին իր հիմնական գործից շեղելը, ամիսը չսկսված արդեն հավաքվում է 100 մլն դրամ, որի օգտագործումը կարելի է բազմաթիվ ձեւերով իրականացնել, կանխիկ վճարումով տրանսպորտային միջոցի ու դրա մասերի մաշելի ձեռքբերումից մինչեւ ապահովագրական եւ այլ խնդիրների լուծումը: Գումարի մի որոշակի մաս կանխավ ունենալը վստահություն է ներշնչում տրանսպորտի կառավարիչներին, կախյալի վիճակից իրենք են դառնում այլոց պահանջներ թելադրողներ: Հակառակ պատկերն է այսօրվա մեր իրականությունում, երբ օրվա վերջին մի քանի հազար վարորդներից յուրաքանչյուրի մոտ միջինը 35 հազար դրամ է հավաքվում, որի ինչպես բաշխվելը որեւէ ձեւով չի արտացոլվում հաջորդ օրը մարդկանց սպասարկելու գործում: Այս գումարի հազիվ մեկ երրորդն է ինչ-որ ձեւով տեսանելի:

Ուղեւորափոխադրումը երկկողմ շահավետ գործընթաց դարձնելը եվրոպական երկրներում արդեն հարուստ փորձ ունի, որի մեր պայմաններում կիրառումն է, որ բարեփոխում կարելի է համարել: Այս ուղղությամբ պետք է գործեն մեր մասնագետ պաշտոնյաները, որը նրանք առայժմ փոխարինում են օրախնդիր հարցեր լուծելով: Քաղաքապետարանն ու ՀՀ տրանսպորտի նախարարությունը կոչված են տրանսպորտային քաղաքականություն իրականացնելու, որն ուղղված լինի համաքաղաքային սեփականության ստեղծմանը: Պարզ է թե բարդ խնդիրը՝ հիմնարար լուծում է պահանջում, որից հետո միայն ներքաղաքային տրանսպորտի կառավարումը ֆնարկման նյութ չի դառնա:

Ուղեւորահոսքի կանխատեսման առումով պակաս կարեւոր չէ մեզանում տեղ գտած անհասկանալի ու կարծես անհեթեթ մի մոտեցման հանդեպ դիրքորոշումը: Խոսքը մինչեւ 7 տարեկան երեխան՝ անվճար, մինչեւ 7 տարեկան 2 երեխաները՝ 1 տոմս եւ 7 տարեկանից բարձր երեխան՝ 1 տոմս պահանջի մասին է: Պարզապես անհասկանալի է, թե ուղեւորներից մեկի հետ երթեւեկող 2-րդ մինչեւ 7 տարեկան երեխան ի՞նչ կերպ է խանգարում տրանսպորտային միջոցի աշխատանքին, երբ տասնյակ այլ ուղեւորներ միայնակ են: Եվրոպա այցելող մեր հայրենակիցները, այդ թվում պաշտոնյաները՝ նկատում են որ ավտոբուս լինի, տրամվայ թե տրոլեյբուս, մարդիկ երթեւեկում են ոչ միայն 2-3 երեխաների հետ, այլեւ մանկասայլակներով, որոնցից կարելի է տրանսպորտային միջոցի ներսում մի քանիսը տեսնել: Ոչ մեկի մտքով չի անցնում դրանց դիմաց գումար պահանջել, քանզի մանկասայլակն ու երեխաները ակնածանք ու հարգանք առաջացնող արժեքներ են: Թե ինչու է սա անտեսվում ժողովրդագրական լրջագույն խնդիր ունեցող մեր երկրում, կաշկանդելով մարդկանց զգալի մասի անվճարունակության արդյունքում երթեւեկելու պահանջը, անհասկանալիից առավել անընդունելի է: Ջէ որ առավել ծախսատար գործերում, ինչպիսին է, ասենք, մանկապարտեզներ հաճախելը, մեզանում անվճարի սկզբունքը կիրառվում է: Այնպես որ վստահություն տածենք, որ երեխաների հոգսերով ու գործերով մտահոգ պետական մեր այրերն ու կառույցները մինչեւ եվրոպացի պաշտոնյաների ակնարկները կանդրադառնան ու կլուծեն խնդիրը, որը համապետական առումով գրեթե ոչինչ չի ներկայացնում: 2-րդ մինչեւ 7 տարեկան երեխայի դիմաց գանձվող գումարը ոչ մի ձեւով չի արտացոլվում ոչ քաղաքապետարանի, ոչ մասնավորի գործունեությունում, դա ուղղակի անիմաստ պահանջ է, եթե կուզեք՝ անպատվաբեր: Օրվա ընթացքում միլիոնավոր դրամների հասնող շահույթները երեխաների հաշվին մի քանի հարյուր դրամով ավելացնելը պարզապես բարոյական չէ, եթե այլ որակում չօգտագործենք:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ

Օրական ավելի շատ վիտամին D, եւ կարող եք ակնոցը մի կողմ դնել

Օրգանիզմում վիտամին D-ի ավելացումը կարող է օգնել կանխելու տարիքի հետ կապված հիվանդությունները, մասնավորապես՝ տեսողության վատացումը եւ կուրությունը:

Միջին տարիքի մկների մոտ, որոնց վեց շաբաթ շարունակ վիտամին D էր տրվել, գրանցվել էր թունավոր սպիտակուցների ավելի քիչ քանակություն. թունավոր սպիտակուցների հետ են կապվում տարիքի հետ կապված այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են աչքի տարիքային ախտահարումը, արտային հիվանդությունները եւ Ալցայմերի հիվանդությունը, տեղեկացնում է «Ծերացման նյարդակենսաբանություն» ամսագիրը: Աչքի տարիքային ախտահարումը 50-ն անց մարդկանց կուրության գլխավոր պատճառն է զարգացած աշխարհում:

Ըստ ուսումնասիրության, բետա-ամիլոյիդի նվազումը մկների աչքերի եւ արյունատար անոթների մեջ զգալիորեն բարելավել էր նրանց տեսողությունը:

Բայց վիտամին D-ով բուժումը նաեւ կրճատել էր մակրոֆագ բջիջների քանակությունը, որոնք կենսական կարեւորություն ունեն իմունային համակարգում:

Ուսումնասիրությունը եւս մեկ անգամ ապացուցել է արեւի ուլտրամանուշակագույն ճառագայթներից մարդու մաշկի վրա առաջացող վիտամին D-ի կապը այնպիսի տարբեր խանգարումների առաջացման հետ, ինչպիսիք են շաքարախտը, արտրիտը եւ քաղցկեղի որոշ տեսակներ:

Մարդիկ այսօր ավելի քիչ են ենթարկվում վիտամին D-ի ազդեցությանը, քան մեր նախնիները:

«Ինդեփենդենթ», հունվարի 17

Թարգմ.

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

հ/հ	Գույքի հասցեն (գտնվելու վայրը)	Վարչական շրջանը	Նպատակը	Հողամասի մակերեսը /քմ/	Շինության մակերեսը /քմ/	Մեկնարկային գինը (դրամ)
1	Մաշտոցի պողոտա 5գ շենք, 30 տարածք	Կենտրոն	ոչ բնակելի տարածք		102.3	4,275,000
2	Բաշինջաղյան փող.հ.185/1	Աջափնյակ	կաթսայատուն	321.07	270.4	10,500,000
3	Միկոյան փող., 15/2	Նոր Նորք	կաթսայատուն	311.24	282.00	11,550,000
4	Գալշոյան 19/1	Նոր Նորք	կաթսայատուն	159.96	137.40	9,525,000
5	Աթոյան անց., հ11/2	Էրեբունի	կաթսայատուն	436	436	19,350,000
6	Խաղաղ Դոնի 12/8	Էրեբունի	կաթսայատուն	164	164	8,250,000
7	Ճառագայթային փող., 136/1	Մալաթիա Սեբաստիա	կաթսայատուն	316	283	17,025,000
8	Իսակովի պող., 52/27	Մալաթիա Սեբաստիա	կաթսայատուն	159	159	6,600,000
9	Շահվերդյան 18, ԿՁՀ 31	Մալաթիա Սեբաստիա	կաթսայատուն	254	237	19,950,000
10	Շիրակի 56	Շենգավիթ	կաթսայատուն	255	229	6,075,000
11	Ավետիսյան փող., 51/1	Նոր Նորք	կաթսայատուն	285	321	11,700,000
12	Նոր-Նորք 8-րդ մ/շ 17/4	Նոր Նորք	կաթսայատուն	241	210	7,650,000
13	Վիլնյուսի փող., 113/4	Նոր Նորք	կաթսայատուն	241	212	6,300,000
14	Վիլնյուսի փող.,67/2	Նոր Նորք	կաթսայատուն	243	213	6,300,000
15	Կաթսայատուն, Արծրունու փող. 16/2	Արաբկիր	կաթսայատուն	138.0	115.7	6,450,000

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մասնամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ փետրվարի 8-ին ժ.16.00-ին , ք. Երեւան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2012թ փետրվարի 8-ը, ժամը 14.00-ն:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Կորել է

Տիգրան Հարությունյանի «Պրինս Նոտա» ՍՊԸ-ում ունեցած թիվ 020776 բաժնեմասի սեփականության իրավունքի վկայագիրը՝տրված 25.07.2005 թվականին:

Համարել անվավեր

Հայտարարություն

Սույն թվականի հունվարի 31-ին, ժամը 13:00–ին ՀՀ Սյունիքի մարզի Շիկահողի գյուղապետարանում տեղի կունենա «Վաչագան» 35 կՎ ՕԳ-ի ճյուղ «Շիկահող»-ի N55 հենարանի տեղափոխման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատը հրավիրում է համագործակցության եւ պատրաստ է մատուցել գործարար հանդիպումների, համաժողովների, բանակցությունների, տեսակոնֆերանսների, շնորհանդեսների կազմակերպման որակյալ ծառայություններ, որոնց համար Ձեր տրամադրության տակ կլինեն Պալատի դահլիճները եւ տեխնիկական լայն հնարավորությունները:

Ձեր միջոցառման համար կարող եք օգտվել Պալատի հետեւյալ դահլիճներից՝

▼ Մեծ դահլիճ (մինչեւ 120 տեղ)
▼ Փոքր դահլիճ (մինչեւ 20 տեղ)
▼ Բանակցությունների սրահ (մինչեւ 10 տեղ)

Պալատը կարող է մատուցել նաեւ հետեւյալ լրացուցիչ ծառայությունները.

▼ Սարքավորումներ (պրոյեկտոր, էկրան, միկրոֆոն, համակարգիչ, տեսակոնֆերանս)
▼ Սուրճի ընդմիջում, ֆուրշետ/ճաշ
▼ Մասնակիցների եւ հրավիրվածների ցանկերի մշակում, անհատական հրավերների կազմակերպում (էլ. նամակ, զանգ, անհատական հրավեր Պալատի անունից եւ այլն)
▼ Լրատվամիջոցների ապահովում
▼ Միջոցառման ֆոտո եւ տեսանկարահանում, թարգմանություն

Մանրամասները՝ Պալատի ինտերնետային կայքում՝
www.armcci.am
56-01-84 (+105), 093-236 559, 099-236 559,
armcci@arminco.com

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 23.1.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: